Էնդրյու Քարնեգի

Իմ կյանքի պատմությունը

Հատվածներ

Ռուսերենից թարգմանությունը՝ Գևորգ Հակոբյանի

ԴՊԻՐ

Էնդրյու Քարնեգի[1]

Իմ կյանքի պատմությունը

(Հատվածներ)

Կարծում եմ՝ սքանչելի, միշտ ուրախ պապիցս, ում անունը հպարտորեն կրում եմ, ժառանգել եմ և՛ մշտական լավատեսությունը, և՛ հոգսերն ու մռայլ մտքերը ինձանից վանելու կարողությունը, և՛ կենսախինդությունը: Կարողանում եմ «բադս կարապ դարձնել». իմ մասին ընկերներս էին ասում: Կարծում եմ, ոգու այդպիսի առույգությունը կյանքում ավելի մեծ նշանակություն ունի, քան հարստությունը: Երիտասարդությունը թող իմանա, որ այդ հատկությունը կարող է իր մեջ դաստիարակել, և, որ հոգին, ինչպես և մարմինը, պետք է լողա արևի շողերում: Քշեք տխուր մտքերը, եթե կան այդպիսիք, և եթե դրանք խղճի խայթից ու սխալ լինելու սեփական գիտակցումից չեն առաջացել: Հիշեք Բյորնսի կտակած կյանքի մեծ օրենքը. «Վախեցիր միայն սեփական խղճի դատաստանից»: Ամենավաղ երիտասարդությունից ղեկավարվել եմ այս օրենքով, և այն ինձ ավելի շատ օգուտ է տվել, քան բոլոր քարոզները, որոնք լսել եմ կյանքի ընթացքում, իսկ դրանք քիչ չեն եղել:

Մայրս նրա երկրորդ աղջիկն էր: Ի վիճակի չեմ նրան նկարագրելու, ինչպես հարկն է, և միայն կասեմ, որ նա իր մորից ժառանգել էր կրթված կնոջ քաղաքավարության արտաքին նազելիությունը: Հնարավոր է, որ երբևէ պատմեմ այդ սքանչելի կնոջ մասին: Չնայած, դժվար թե դա անեմ: Նա ինձ համար չափից մեծ սրբություն է: Ոչ ոք նրան չգիտեր այնպես, ինչպես ես: Հայրս շուտ է մահացել, և նրա մահից հետո մայրս ինձ համար ամեն ինչ էր: Առաջին գիրքս այսպիսի նվիրագիր ուներ. «Իմ ամենաթանկագին հերոսուհուն՝ մորս»: Այս բառերով ամեն ինչ ասված է:

Մանկության տարիներին ինձ համար մեծագույն հաճույք էր ճագարներ և աղավնիներ պահելը: Իմ փետրավոր և չորսոտանի սիրելիների համար հայրս

[1] Ամերիկացի ձեռնարկատեր, խոշոր արդյունաբերող, միլիոնատեր (1835-1919)

գեղեցիկ տնակ էր պատրաստել, մինչև հիմա երախտագիտությամբ եմ հիշում այդ մասին: Մայրս կարծում էր, որ ընտանիքի ազդեցությունը ամենալավը կպահի տղաներին ճիշտ ճանապարհին, և դրա համար պետք է, որ տունը նրանց համար հարմարավետ լինի: Չգիտեմ, թե ինչ չէին անի հայրս և մայրս, որպեսզի միայն որախություն պատճառեին մեզ և հարևանների երեխաներին: Ճագար պահելու հետ է կապված իմ առաջին գործնական փորձառությունը: Ես ամբողջ ամառը ապահովված էի ընկերներիս ծառայություններով, ինչպես իսկական գործատու, և դրա համար միակ վարձատրություն էի նշանակել. նոր ծնված ճագարիկներին կոչում էի նրանց անուններով: Ամեն շաբաթ օր ընկերներս գնում էին ճագարների համար կեր հավաքելու: Մինչև հիմա էլ խիղճս տանջում է, որ այդպես աղքատորեն եմ վարձատրել իմ խաղի ընկերներին՝ իրենց աշխատանքի համար: Նրանցից շատերը ամբողջ ամառը ինձ հետ միասին խոտ էին հավաքում ճագարների համար, բավարարվելով այդ միակ վճարով, ամենաննշան, որ երբևէ գոյություն է ունեցել: Բայց ի՞նչ կարող էի նրանց առաջարկել: Չէ՞ որ ես էլ ոչ մի պենի չունեի...

Այս հիշողությունը կարևոր է, որովհետև այն առաջին նշանն էր, որ ես օժտված եմ կազմակերպչական տաղանդով, որի զարգացումից էր կախված կյանքում իմ արտաքին հաջողությունը: Այդ հաջողության համար ավելի շատ պարտական եմ իմ այն կարողությանը, որ միշտ կարողացել եմ գտնել այնպիսի մարդիկ, ովքեր ինձանից լավ գիտեն, թե ինչ պետք է անել, քան սեփական գիտելիքներին և կարողություններին: Ես շոգեմեքենայից ոչինչ չէի հասկանում, բայց փորձում էի ներթափանցել ավելի բարդ մեխանիզմ, որը մարդ է կոչվում:

Իսկ վերջալույսին, տնտեսությունից ազատ րոպեներին, նա փոքրիկ եղբորս, ով թելում էր ասեղը կամ մեղրամոմ էր քսում թելին, նստեցնում էր ծնկներին և պատմում, ինչպես մի ժամանակ ինձ, տարբեր ուսանելի պատմություններ կամ արտասանում էր շոտլանդական ժողովրդական պոեզիայի լավագույն նմուշներից:

Այս իմաստով աղքատների երեխաները շատ ավելի լավ վիճակում են, քան հարուստներինը, քանի որ մոր տեսքով նրանք ունեն խնամողի, խոհարարուհու, դաստիարակչուհու, ուսուցչուհու, պահպանիչ-հրեշտակի: Իսկ հայրը միաժամանակ նրանց համար օրինակ է, ղեկավար, խորհրդատու, ընկեր: Եղբայրս և ես մեծացել ենք այսպիսի պայմաններում: Եվ ի՞նչ կարող է ինչ-որ միլիոնատիրոջ կամ ազնվականի երեխա հակադրել այսպիսի պայմաններին:

... Վերջապես պետք է կարևոր հարց լուծեինք. ես ի՞նչ եմ անելու: Այդ ժամանակ տասներեք տարեկան էի: Դպրոցական կրթությունս դեռ Դանֆերմլինում էր ընդմիշտ ավարտվել: Ամերիկայում միայն մի ձմեռ երեկոյան դպրոց էի հաճախել: Ավելի ուշ որոշ ժամանակ ֆրանսերեն էի սովորել, ուսուցիչս բառի զարմանալի վարպետ էր ու ինձ արտասանել սովորեցրեց: Կարողանում էի կարդալ, գրել, հաշվել և սկսեցի հանրահաշիվ ու լատիներեն սովորել: Նամակը, որը տեղափոխվելու ժամանակ գրել էի քեռուս և հետագայում ետ էի ստացել, ապացուցում էր, որ այն ժամանակ ավելի լավ էի գրում, քան հիմա: Տանջվում էի անգլերենի քերականությունը սովորելիս, և մյուս երեխաների նման չէի հասկանում, թե ինչու են դրանով մեզ տանջում: Շատ քիչ էի կարդում, բացի Ուոլեսից, Բրյուսից և Բյորնսից, բայց փոխարենը անգիր գիտեի հայտնի շատ բանաստեղծություններ: Նաև մանկական հեքիաթներ գիտեի և հատկապես «Հազար ու մեկ գիշեր»-ի հեքիաթները, որոնք իմ առաջ նոր և կախարդական աշխարհ բացեցին: Ուղղակի կուլ էի տալիս այդ հեքիաթները:

Բոլոր մտքերս և ձգտումներս ուղղված էին նրան, թե ինչպես ինքս փող աշխատեմ, որպեսզի մեր ընտանիքը կարողանա նոր հայրենիքում իր համար տեղ ապահովել: Մշտական կարիքի մեջ կյանքի հեռանկարը ինձ հանգիստ չէր տալիս գիշեր ու ցերեկ: Եվ ես միայն այն բանի մասին էի մտածում, թե ինչպես անենք, որ մեր ընտանիքը կարողանա տարեկան երեք հարյուր դոլար ետ գցել. ամսական քսանհինգ դոլարը համարում էի այն անհրաժեշտ գումարը, որը ուրիշներից անկախ լինելու համար անհրաժեշտ էր:

Մեր կյանքը ծանր էր: Զմռանը հորս հետ պետք է արթնանայինք, երբ դեռ բոլորովին մութ էր, նախաճաշեինք և հասնեինք ֆաբրիկա, նախքան լույսը կբացվեր: Աշխատանքը շարունակվում էր մինչև մութն ընկնելը, միայն ճաշին փոքր ընդմիջում ունեինք: Ժամերն ինձ համար շատ դանդաղ էին ձգվում, և աշխատանքը ոչ մի ուրախություն չէր պարգևում: Բայց հոգիս լուսավորվում էր, երբ մտածում էի, որ աշխատում եմ ընտանիքի, մեր տան համար: Հետագայում շատ միլիոններ եմ աշխատել, բայց դրանցից ոչ մեկը ինձ այնպիսի ուրախություն չի պատճառել, որքան շաբաթվա համար ստացած առաջին աշխատավարձս: Մտածում էի, որ արդեն ընտանիքի օգնական եմ, որ ինքս եմ փող վաստակում և ծնողներիս ուսերին բեռ չեմ: Այո, ես ցանկանում էի նրանց օգնել, ցանկանում էի մեր փոքրիկ նավակը պահել ջրի երեսին:

Մի անգամ, 1850թ. սկզբին, տուն վերադառնալով, ծնողներիցս լսեցի, որ հեռագրատան վարիչ պարոն Դևիդ Բրուքսը քեռի Հոգանից հետաքրքրվել է, թե նա չի ճանաչում հարմար տղայի, որին կարելի լինի հեռագրատան ցրիչի պարտականությունները վստահել: Նրանք երկուսն էլ մոլի շաշկի խաղացողներ էին, և պարտիաներից մեկի ժամանակ էլ ծագել էր այդ կարևոր հարցը: Այդպես մանրուքները հաճախ իրենց ետևից մեծ հետևանքներ են բերում: Երբեմն բավական է լինում բառ, հայացք, ձայնի ելևէջ, որպեսզի ազդի ոչ միայն առանձին մարդու, այլև ամբողջ ժողովրդի ճակատագրի վրա: Ինչ-որ բան մանրուք համարելը մեծ ինքնավստահություն է: Չեմ հիշում, թե ով եղել այն մարդը, ով մանրուքներին ուշադրություն չդարձնելու խորհրդին պատասխանել է, որ ինքը սիրով կհետևեր այդ խորհրդին, եթե իրեն բացատրեին, թե ինչ է մանրուքը:

Մեր բանակցությունների արդյունքը հաջող էր: Հարկ համարեցի հայտնել, որ դեռ վատ գիտեմ Փիթսբուրգը, որ աշխատանքը, կարող է ինձ համար դժվար լինել, քանի որ ես դեռ բավարար չափով ուժեղ չեմ, բայց, այնուամենայնիվ, պատրաստ եմ փորձել: Պարոն Բրուքսը հարցրեց, թե երբ կարող եմ սկսել ծառայությունը, ինչին պատասխանեցի, որ եթե հարկա կա, անմիջապես: Հիմա, հիշելով պատասխանս, կարծում եմ, որ յուրաքանչյուր պատանու չէր խանգարի այդ մասին մտածելը: Ստեղծված իրադրությունից անմիջապես չօգտվելը մեծ սխալ է: Ինձ աշխատանք են առաջարկել, և, եթե անմիջապես չհամաձայնեմ, հետո կարող է ինչ-որ բան պատահել, և իմ փոխարեն կարող է ուրիշ տղա հայտնվել: Բայց հիմա ես այստեղ եմ և հաստատ որոշել եմ մնալ, եթե միայն ամենափոքր հնարավորություն լինի: Պարոն Բրուքսը ինձ հետ շատ սիրալիր վարվեց. սկզբնական շրջանում պետք է պահուստային ցրիչի պարտականություններ կատարեի, նա կանչեց մյուս տղաներին և հանձնարարեց, որ ինձ իրենց հետ վերցնեն և ծանոթացնեն նոր պարտականություններիս: Դեռ ժամանակ էլ գտա, որպեսզի վազեմ հորս մոտ և ասեմ, որ ամեն ինչ կարգին է, և խնդրեմ՝ մորս փոխանցի, որ արդեն ծառայության մեջ եմ:

Այսպիսով, 1850 թվականը շրջադարձային դարձավ իմ հետագա կյանքում: Մութ նկուղից, որտեղ շաբաթը երկու դոլարի համար մրոտ դեմքով տանջվում էի շոգեմեքենայի վրա, տեղափոխվել էի երկինք, որտեղ արևային լույսի մեջ ինձ շրջապատում էին թերթերը, փետուրե գրիչները, մատիտները: Օրվա ընթացքում չկար րոպե, երբ ինչ-որ նոր բան չսովորեի կամ իմանայի, թե ինչքան

շատ բան դեռ կա, որ չգիտեմ ու պետք է սովորեմ: Այնպիսի զգացողություն էր, որ ես կանգնած եմ աստիճանի ներքևի հարթակին, որով դեռ պետք է բարձրանամ:
Այն ժամանակ մի հոգս ունեի, որ բավականաչափ արագ չէի հիշում տարբեր առևտրային ընկերությունների հասցեները, ուր պետք էր հեռագրերը հասցնել: Դրա համար ես գրում էի մի մայթի տների բոլոր ցուցակները աճող հերթականությամբ, իսկ մյուս մայթինը՝ նվազող. երեկոյան բոլորը վերահամարակալում էի: Եվ արդեն կարճ ժամանկում կարող էի փակ աչքերով, թվարկել բոլոր ընկերությունների անունները՝ փողոցի մի ծայրից մյուսը: Իմ հաջորդ գործը մարդկանց հետ ծանոթանալն էր: Որովհետև այն ցրիչը, ով դեմքով ճանաչում էր ընկերությանում ծառայողներին, նա կարող էր խնայել ճանապարհի զգալի մասը՝ հանդիպելով ճանապարհին նրանցից մեկին: Մեզ՝ տղաներիս համար, մեծ հաջողություն էր, եթե կարողանում էինք նրանցից մեկին փողոցում տալ հեռագիրը: Դրան միանում էր նաև հպարտության զգացումը, որ մեծ մարդը (իսկ հեռագիր բաժանողներիս համար բոլորն էլ մեծ մարդիկ են) կանգնում էր փողոցում և ողջույնի մի քանի խոսք ասում:

Մեր կյանքը միայն հաճույքներից չէր բաղկացած. սպիված էինք շատ լարված աշխատել: Երկու օրը մեկ մեր աշխատանքը վերջանում էր այն ժամանակ, երբ փակվում էր գրասենյակը, և այդպիսի երեկոներին հազվադեպ էի 11-ից շուտ տուն հասնում: Մյուս օրերը ազատվում էինք երեկոյան 6-ին: Հասկանալի է, որ նման պայմաններում քիչ ժամանակ էր մնում հետագա կրթությանս համար: Դրանից բացի, ընտանիքի կարիքները այնպիսին էին, որ մոտս գրքերի համար ավելորդ փող չէր մնում: Հանկարծ, ասես երկնքից, իմ առաջ բացվեց գրքերի գանձարան:

Գնդապետ Ջեյմս Անդերսոնը, հավերժ հիշատակ նրան, տեղեկացրեց, որ 400 գրքից բաղկացած իր գրադարանը տրամադրում է պատանի բանվորներին, որոնք ամեն շաբաթ երեկո կարող էին մի գիրք տանել տուն և հաջորդ շաբաթ օրը փոխարինել: Ընկերս՝ Թոմաս Միլերը հիշեցրեց, որ գնդապետ Անդերսոնի գրքերը նախատեսված էին միայն «բանվոր» (working boys) տղաների համար, և, հետևաբար, հայտնի չէր, իրավունք ունենին օգտվել ցրիչները (messenger boys), գրասենյակում ծառայողները և ընդհանրապես բանվոր չհանդիսացողները: Դրա հետևանքն եղավ այն, որ առաջին անգամ հանդես եկա մամուլում. նամակ գրեցի «Pittsburgh Dispatch»-ի խմբագրությանը:

Նամակում համոզիչ խնդրում էի մեզ չանտեսել, քանի որ մեզանից շատերը առաջ սևագործ բանվորներ են եղել, և, հետևաբար, իրավունք ունեին «պատանի բավորներ» կոչվելու: Այդ նամակից հետո գնդապետ Անդերսոնը փոխեց իր սկզբնական կարգադրությունը՝ հօգուտ մեզ: Այսպիսով, մամուլում իմ առաջին ելույթը հաջողություն ունեցավ:

Իմ մտերիմ ընկեր Թոմ Միլերը, ով ապրում էր գնդապետ Անդերսոնի հարևանությամբ, ծանոթացրեց մեզ:

Այսպիսով բացվեցին խավարիս դռները, և գիտելիքի լույսը թափանցեց այնտեղ: Այդ ժամանակից և՛ աշխատանքային օրս, և՛ երեկոյան ծառայության երկար ժամերը լուսավորվում էին գրքերով, որոնցից երբեք չէի բաժանվում և կարդում էի ամեն րոպե, որը կարողանում էի փախցնել աշխատանքիցս: Երբ մտածում էի, որ հաջորդ շաբաթ ձեռքիս նոր գիրք է լինելու, ապագան լուսավոր և փայլուն էր թվում:

Բայց մեծագույն գրող Շեքսպիրին այն ժամանակ ծանոթ չէի, բացառությամբ դպրոցական դասագրքում եղած մի քանի հատվածների. միայն հետագայում փիթսբուրգյան թատրոն այցելությունը հետաքրքրություն առաջացրեց Շեքսպիրի նկատմամբ: Մոտ ընկերներս՝ Ջոն Ֆիփսը, Ջեյմս Ուլիսոնը, Թոմաս Միլերը և Ուիլյամ Քաուլին, ինձ հետ հավասար ունեին գնդապետ Անդեսոնի գրադարանից օգտվելու թանկարժեք իրավունքը: Նրա մեծահոգության շնորհիվ իմ տրամադրության տակ եղան գրքեր, որոնք առանց նրա անհասանելիկմնային: Նրան եմ պարտական գրականության հանդեպ սիրո համար, ինչը չեմ փոխի աշխարհի բոլոր գանձերի հետ: Առանց դրա կյանքն անտանելի կլիներ: Նրա ազդեցությունը իմ և ընկերներիս պահպանեց վատ շրջապատից և վատ սովորույթներից:

Այսպիսով, սեփական փորձով, հանգեցի եզրակացության, որը հետագայում դարձավ իմ համոզմունքը. լավ կարողություններ և հետագա զարգացման ձգտում ունեցող պատանի աղջիկների և տղաների բարօրության համար չի կարելի փողը ավելի նպատակահարմար ծախսել, քան հանրային գրադարաններ ստեղծելը: Վստահ եմ, որ իմ հիմնած գրադարանները հետագայում կապացուցեն իմ կարծիքը:

Գրադարանի ամենամեծ օգուտն այն է, որ այնտեղ ամբարված գանձերը պետք է ինքնուրույն գտնես: Պատանիները իրենք պետք է ձեռք բերեն իրենց գիտելիքները: Դրանից ոչ մեկը չի կարող ազատվել:

.... Հեռագրատուն իմ ընդունվելուց մոտ մեկ տարի էր անցել: Ջոն Գլասը՝ հասարակությունից հաղորդագրությունների ընդունման բաժնի վարիչը, իր կարճաժամկետ բացակայությունների ժամանակ սկսեց ինձ փոխանցել իր պարտականությունները: Քանի որ նա քաղաքում մեծ ժողովրդականություն էր վայելում և ակտիվ մասնակցում էր քաղաքականությանը, նրա բացակայությունը ավելի հաճախակի և տևական էր դառնում, և շուտով ես ամբողջովին վարժվեցի այդ աշխատանքին: Մարդկանցից ընդունում էի հաղորդագրությունները և հետևում, որ ցրիչները ստացված հեռագրերը ժամանակին հասցնեին հասցեատերերին:

Տղայի համար այսպիսի աշխատանքը վերին աստիճանի գայթակղիչ էր: Այս պատճառով էլ, այդ ժամանակ մյուս տղաների համակրանքին չէի արժանանում, նրանք բարյացակամ չէին վերաբերում ինձ, քանի որ ինձ ազատել էին նախկին պարտականություններից:

Ինձ նախատում էին նաև, որ շատ վատ էի հագնվում: Ես չէի ծախսում իմ անսպասելի աշխատավարձերը, թե ինչու՝ նրանք չգիտեին: Գիտեի, որ տանը կա յուրաքանչյուր պենիի կարիքը, որը ինձ հաջողվում էր խնայել: Ծնողներս շատ խելամիտ էին և ինձանից ոչինչ չէին թաքցնում: Ինձ հայտնի էր, թե որքան է ընտանիքի երեք կերակրողների՝ հորս, մորս և իմ, շաբաթական աշխատավարձը: Գիտեի նաև մեր բոլոր ծախսերը: Միասին էինք քննարկում, թե ինչպես լրացնենք մեր համեստ կահույքը և հագուստը, և յուրաքանչյուր նոր ձեռք բերված իրը, ինչքան էլ որ աննշան լիներ, դառնում էր մեծագույն ուրախության աղբյուր: Դժվար է ավելի համերաշխ ընտանիք պատկերացնել, քան մերն էր:

Յուրաքանչյուր արծաթե կեսդոլարանոցը, որը մորս հաջողվում էր խնայել, ջանասիրաբար թաքցվում էր գուլպայում, որտեղ էլ պահվում էր: Երբ հավաքվեց երկու հարյուր հատ, ինձ հանձնարարվեց վերադարձնել այն քսան ֆունթ սթերլինգը, որը մեզ պարտքով տվել էր մորս բարեկամ միսիս Հենդերսոնը: Ի՜նչ տոն էր մեզ համար: Կարնեգիների ընտանիքը այլևս պարտք չուներ: Ինչքա՜ն երջանիկ էինք այդ օրը: Նյութական պարտքը վճարված էր,

բայց շնորհակալության պարտքը երբեք չի կարող մարվել: Մենք չենք կարող մոռանալ միսիս Հենդերսոնին:

Մի երկո, երբ պարոն Գլասը տղաներին բաժանում էր ամսական աշխատավարձերը, ցրիչի իմ կյանքում տեղի ունեցավ մի իրադարձություն, որն ինձ ստիպեց զգալ, ինչպես յոթերորդ երկնքում: Մենք շարք էին կանգնած այն սեղանի առաջ, որտեղից վճարում էին մեր աշխատավարձը. ամենամոտիկն էի կանգնած և ձեռքս մեկնեցի առաջին ծրարին, որի մեջ տասնմեկ և քառորդ դոլար կար: Բայց, ինձ համար անակնկալ, պարոն Գլասը ինձ բաց թողեց և ծրարը տվեց հաջորդ տղային: Մտածեցի, որ նա սխալվել է, քանի որ սովորաբար ես էի առաջինը ստանում: Բայց նույն պատմությունը կրկնվեց, ինչն բոլոր տղաներն ստացան:

Սիրտս այնպես էր բաբախում, կարծես ուզում էր կրծքիցս դուրս թռչել: Բոլորի ներկայությամբ խայտառակվել էի: Ի՞նչ էի արել, ի՞նչ բացթողում ունեի: Հավանաբար, հիմա կլսեմ, որ այստեղ անելիք չունեմ: Ես մեր ընտանիքի խայտառակությունն եմ, և սա ինձ համար ամենասարսափելին էր: Երբ բոլոր տղաները ստացան իրենց աշխատավաձը և ցրվեցին, պարոն Գլաստն ինձ ասաց, որ ես ավելին արժեմ և այդ պահից սկսած ամսական կստանամ տասներեք ու կես դոլար:

Գլուխս պտտվեց, ինձ թվաց, որ չհասկացա: Բայց նա հաշվեց ու տվեց տասներեք ու կես դոլար: Չեմ հիշում՝ շնորհակություն ասացի՞, բայց ինձ թվում է, որ մոռացել եմ դա անել:

Վերցրեցի փողը, մի ցատկով հայտնվեցի դռան ետևում և մինչև տուն ամբողջ ճանապարհն անցա վազելով: Մորս, ով մեր տան գանձապահի պարտականությունն էր կատարում, տվեցի տասնմեկ և քառորդ դոլարը և չասացի, որ գրպանումս ունեմ էլի երկուս և քառորդ դոլար: Մինչև հիմա էլ դրանք ինձ համար ավելի թանկ են, քան հետագայում աշխատած իմ բոլոր միլիոնները:

Կիրակի առավոտյան, երբ ամբողջ ընտանիքը հավաքվել էր նախաճաշելու, գրպանիցս հանեցի երկուս ու քառորդ դոլարը: Զարմանքը շատ մեծ էր, և բավականին ժամանակ անցավ, մինչև ծնողներս հասկացան, թե ինչ է եղել: Եվ այդ ժամանակ հորս երեսի նուրբ հպարտության արտահայտությունը և մորս՝ արցունքներից փայլող աչքերը մատնեցին նրանց զգացումները: Սա իրենց

տղայի առաջին մեծ հաջողությունն էր և այն բանի անկասկածելի ապացույցը, որ նա արժանի է առաջխաղացման: Հետագա հաջողություններիցս ոչ մեկը, ոչ մեկի կողմից իմ արժանիքների գնահատումն այդպիսի ուրախություն չեն պատճառել ինձ: Ինձ յոթերորդ երկնքում էի զգում: Ամբողջ իմ փոքրիկ աշխարհը ուրախության արտասուք էր թափում:

.... Գրասենյակը առավոտյան հավաքելիս, մինչև ծառայողների գալը, տղաներով հնարավորություն էինք ունենում սարքերի վրա վարժվելու: Դա նոր հնարավորություն էր: Շոտով սովորեցի հեռագրական սարքով աշխատել և հեռագրական կապեր հաստատեցի այլ գրասենյակների տղաների հետ: Եթե ինչ-որ բան սովորում ես, միշտ կգտնվի սովորածը գործնականում կիրառելու հնարավորություն: Մի առավոտ Փիթսբուրգը կանչող ուժգին ազդանշան լսեցի: Եզրակացրեցի, որ ինչ-որ մեկը ցանկանում է շտապ հեռագիր ուղարկել: Երկար չմտածելով, որոշեցի պատասխանել և միացրի ժապավենը: Պարզվեց, որ Ֆիլադելֆիան ցանկանում է շտապ հաղորդագրություն ուղարկել Փիթսբուրգ՝ մահվան մասին: Կարո՞ղ եմ ընդունել: Պատասխանեցի, որ կփորձեմ, եթե դանդաղ հաղորդեն: Ամեն ինչ հաջող ստացվեց, և վազեցի հեռագիրը հասցեատիրոջը հանձնելու: Հուզմունքով սպասեցի պարոն Բրուքսի գալուն և նրան հայտնեցի, թե ինչ եմ արել: Բարեբախտաբար, նա խրախուսեց արարքս և գովեց՝ ինքնագլուխ գործողության համար պախարակելու փոխարեն: Դրանից հետո, հեռագրավարների կարճաժամկետ բացակայությունների ընթացքում, ինձ թույլատրում էին աշխատել սարքերի վրա: Այսպես սովորեցի հեռագրավարել:

Գրինսբուրգում զբաղեցրի հեռագրական գործում իմ առաջին պատասխանատու պաշտոնը: Այնքան էի ջանում անհրաժեշտության դեպքում միշտ տեղում լինել, որ մի գիշեր, կայծակի ժամանակ, երկար էի մնացել գրասենյակում՝ չցանկանալով ընդհատել կապը: Շատ էի մոտեցել հոսանքի անջատիչին և, որպես պատիժ այդ թեթևամիտ վարքիս համար, շպրտվեցի աթոռից: Մազ էր մնացել, որ սպանվեի կայծակից: Այդ ժամանակից ձեռք բերեցի կայծակի դեպքում ամենազգույշ աշխատողի համբավ:

Այդ ժամանակ տասնվեց տարեկան էի, ուսման տարիներն ինձ համար ավարտված էին:

Արդեն երեխա չէի, դարձել էի մեծահասակ և աշխատում էի մեծահասակի նման. օրական մեկ դոլար էի վաստակում:

Հեռագրատան գրասենյակը փայլուն դպրոց է երիտասարդի համար: Այստեղ գերազանց ձևով կարող են զարգանալ նրա հնարամտությունը և համադրելու կարողությունը: Ինձ պետք եկան անգլիական և եվրոպական պայմանների մասին գիտելիքներս: Ցանկացած գիտելիք օգտակար է. վաղ թե ուշ այն գտնում է իր կիրառությունը:

.... Այդպիսի ակումբի աշխատանքին մասնակցությունը մեծ առավելություն էր յուրաքանչյուր երիտասարդի համար: Սպասվող քննարկմանը պատրաստվելիս շատ էի կարդում և դա մտքերս դարձնում էր ավելի պարզ ու ճշգրիտ: Այդ ժամանակվանից հասարակական ելույթների ժամանակ ղեկավարվում եմ երկու սկզբունքներով: Առաջին՝ տանը լավ պատրաստվել, թե ինչի մասին ես ելույթ ունենալու, և ունկնդիրների հետ խոսել ամենապարզ ձևով, ոչ թե նրանց գլուխների վրայից: Երկրորդ՝ չփորձես ուրիշներին թվալ այնպիսին, ինչպիսին չես, միշտ ինքդ քեզ հարազատ մնա, իզուր չդատարկախոսես այնքան, մինչև գլուխդ պայթի:

Իջա գետափ և սպասեցի նավին, որով երեկոյան ժամանեց հայրս: Մինչև հիմա հիշում եմ, թե որքան ցավալի էր, երբ տեսա, որ նա եկել էր տախտակամածին, որպեսզի ավելորդ փող չծախսի նավախցի տոմսի համար: Վշատացել էի մինչև հոգուս խորքը, որ այդպիսի մարդը ստիպված էր ճանապարհորդել նման պայմաններում: Բայց մխիթարվում էի սիրածս մտքով:

-Ոչինչ, հայրիկ,- ասացի,- հեռու չէ այն ժամանակը, երբ սեփական կառքով մայրիկի հետ կշրջեք:

Հայրս շատ ամոթխած, զուսպ մարդ էր և (որպես իսկական շոտլանդացի) շատ ժլատ էր գովեստների մեջ՝ վախենալով, որ որդիները դրանից կմեծամտանան: Բայց բավական էր, որ նա հուզվեր ինչ- որ պատճառով, և բոլորովին կորցնում էր զգացմունքներին տիրապետումը: Այդպես պատահեց նաև այս դեպքում: Նա բռնեց ձեռքս, նայեց ինձ այնպիսի հայացքով, որը չեմ մոռանա մինչև կյանքիս վերջը, և ցածր ու դանդաղ ասաց. -Էնդրյու, ես հպարտանում եմ քեզնով:

Նրա ձայնը դողում էր, և թվում էր, որ նա ամաչում է իր խոսքերից: Երբ նա ինձ բարի գիշեր մաղթեց և համոզեց, որ գրասենյակ վերադառնամ, նկատեցի, որ նրա աչքերը թաց էին: Երկար տարիներ նրա խոսքերը հնչում էին ականջներումս և տաքացնում սիրտս: Մենք հասկանում էինք իրար: Ինչքա՛ն

զուսպ են շոտլանդացիները: Նրանք որքան խորն են զգում, այնքան քիչ են խոսում, և լավ է, որ այդպես է: Կան սրբազան խորքեր, որոնց լուսաբանումը սրբապղծություն կլինի: Հաճախ լռությունը բառերից ավելի պերճախոս է:

.... Փիթսբուրգ վերադառնալուց անմիջապես հետո ծանոթացա մի հրաշալի մարդու՝ Թոմաս Ա. Սքոթի հետ, ով իրավացիորեն իր բնագավառում պետք է հանճար համարվեր:

Նա Փիթսբուրգ էր եկել, որպես Փենսիլվանյան երկաթուղու պետ: Նրա և ճանապարհի տնօրեն պարոն Լոմբերտի միջև, ով Ալթունում էր, շատ ակտիվ հեռագրական հաղորդագրություն էր պահպանվում: Այդ պատճառով պարոն Սքոթը հաճախ էր երեկոյան գալիս հեռագրատուն, և հաճախ դա պատահում էր իմ հերթապահության օրերին: Մի անգամ, ի զարմանս ինձ, նրա օգնականներից մեկը, ում հետ ծանոթ էի, ասաց, որ պարոն Սքոթը իրեն հարցրել է, թե չեմ ցանկանա իր մոտ աշխատել, որպես քարտուղար և հեռագրավար: Ծանոթս պատասխանել էր.

-Ամենևին, չէ որ նա հեռագրավար է:

Անմիջապես առարկեցի.

-Իզուր եք շտապել: Ես կաշխատեմ նրա մոտ, որովհետև շատ եմ ցանկանում թողնել այս ծառայությունը: Խնդրում եմ փոխանցեք պարով Սքոթին:

Այսպիսով, 1853թ. փետրվարի 1-ին անցա պարոն Սքոթի մոտ ծառայության, որպես քարտուղար և հեռագրավար՝ ամսական 35 դոլար աշխատավարձով: Այդ ժամանակ տասնութ տարեկան էի: Ինձ համար սկսվեց նոր կյանք, որը ամենևին նրան չէր մինչ այդ ապրածիս:

Երկաթուղում ծառայության անցնելուց շատ չանցած, պարոն Սքոթն ինձ ուղարկեց Ալթուն՝ ամենամսյա աշխառավարձի հաշվետվությունները և կտրոնները բերելու: Այդ ժամանակ Ալեգանյան լեռներով անցնող երկաթուղին դեռ ավարտված չէր, և ստիպված էինք գնալ բլրապատ նախալեռներով, ինչը այդ ճանապարհը ինձ համար շատ հետաքրքիր էր դարձնում: Ետդարձի ճանապարհին մի արկած պատահեց, որը քիչ էր մնում խորտակեր իմ ամբողջ ծառայողական առաջխաղացումը: Ստանալով հաշվետվությունները և կտրոնները՝ ուղևորվեցի Փիթսբուրգ: Քանի որ ծրարը շատ ծավալուն էր, գրպանումս չտեղավորվեց, և այն խցկեցի ժիլետիս տակ: Այդ ժամանակներում

շատ էի սիրում երկաթուղով ճանապարհորդել և մեծ բավականությամբ ճանապարհորդում էր շոգեքարշով: Բարձրացա շոգեքարշ, և ճանապարհ ընկանք: Ճանապարհը շատ թափահարող էր: Հանկարծ հիշեցի ծրարի մասին, շոշափեցի ժիլետը, և ի սարսափ ինձ, նկատեցի, որ այն չկար:

Հասկանում էի, որ այդ դիպվածը կարող է թանկ նստել վրաս: Ինձ տրված հանձնարարությունը վստահության ցուցադրություն էր, և այդ հաշվետվություններն ու քարտերը պետք է աչքիս լույսի պես պահպանեի. դրանց անհետացումը, հասկանելի է, ոչնչացնող տպավորության կհանգեցներ: Մեքենավարին ասացի, որ, հավանաբար, ծրարը ընկել է մի երկու մղոն առաջ և խնդրեցի վերադառնալ: Բարեհոգի մարդը համաձայնեց:

Ուշադիր նայում էի շուրջ բոլորը և գետի ափին, համարյա ջրի մոտ, տեսա ծրարը: Աչքերիս հազիվ հավատալով, ցած թռա շոգեքարշից և բարձրացրեցի ծրարը: Այն անվնաս էր: Ավելորդ է ասել, որ այն ձեռքիցս այլևս բաց չթողեցի մինչև Փիթսբուրգ:

Եթե ծրարը մի քանի ֆութ ավելի մոտ ընկներ գետին, և ջուրը քշեր, պետք կլիներ տարիների բարեխիղճ աշխատանք, որպեսզի հարթվեր այդ անփութության արդյունքը: Կզրկվեի մարդկանց վստահությունից, ում վերաբերմունքից կախված էր հետագա ճակատագիրս: Կարծում եմ, որ այս դեպքն ինձ սովորեցրեց, որ հետագայում խիստ չվերաբերեմ սկսնակների սխալներին: Այդպիսի դեպքերում մտածում եմ, որ կյանքս, հնարավոր է, լրիվ այլ կերպ դասավորվեր, եթե երջանիկ պատահականությունն այն ժամանակ չօգներ ինձ գտնել ծրարը գետի ափին:

Պատանեկության տարիներից եղել եմ ստրկատիրության կատաղի հակառակորդը և սրտանց ողջունեցի Հանրապետականների առաջին համագումարը, որը տեղի ունեցավ Փիթսբուրգում 1856թ. փետրվարի 22-ին, չնայած այդ ժամանակ դեռ ձայնի իրավունք չունեի: Ետ նայելով, մինչև հիմա էլ ցավում եմ, որ մեր երկիրը ազատվեց այդ անիծյալ ստրկատիրությունից այդպիսի թանկ գնով, ինչպիսին Քաղաքացիական պատերազմն էր:

Մի առավոտ աշխատանքի գալով՝ իմացա, որ Արևելյան գծում լուրջ վթար էր տեղի ունեցել, որի արդյունքում կանգնեցվել էր արևմուտք գնացող հատուկ գնացքը, և որ դեպի արևելք եկող մարդատար գնացքը շարժվում է միայն

երկաթգծային պահակի ուղեկցությամբ, ով ազդանշան է տալիս յուրաքանչյուր շրջադարձի վրա: Երկու ուղղությամբ գնացող բեռնատար գնացքները վաղուց տարվել էին պահուստային գծեր: Պարոն Սքոթին ոչ մի տեղ հնարավոր չեղավ գտնել: Չկարողացա կանգնել գործին խառնվելու գայթակղության առաջ՝ սեփական ռիսկով կարգադրություններ ուղարկել հեռագրով և այդպիսով կարգավորել երթևեկությունը: Պարզորեն հասկանում էի, որ սխալի դեպքում ինձ սպասում էր աշխատանքից ազատում, խայտառակություն, նույնիսկ, հնարավոր է, որ դատի տային: Մյուս կողմից՝ բեռնատար գնացքների աշխատակիցներին, ովքեր ամբողջ գիշերը մնացել էին երկաթուղու գծերին, հանգիստ տալու հնարավորություն ունեի: Իմ իշխանության տակ էր ամբողջ մեխանիզմը նորից աշխատեցնելը: Գիտեի, որ կկարողանամ դա անել: Հաճախ էի հեռագրով փոխանցել պարով Սքոթի կարգադրությունները: Գիտեի, թե ինչպես պետք է գործեի այդ դեպքում, և անմիջապես գործի անցա: Սկսեցի կարգադրություններ ուղարկել պարով Սքոթի անունից, և հեռագրական ապարատի մոտ նստած ուղարկում էի գնացքները, նրանց տեղաշարժելով կայարանից կայարան, ձեռք էի առնում նախազգուշական բոլոր միջոցները, և ամեն ինչ կարգի էր ընկել, երբ վերջապես հայտնվեց պարոն Սքոթը:

Փիթսբուրգի բեռնատարների շարժման ղեկավար պարոբ Ֆրենսիսկուսից իմացա, որ այդ՝ ինձ համար հիշարժան օրը, երեկոյան պարոն Սքոթը իմ մասին նրան ասել էր.

-Իսկ գիտե՞ք, թե ինչ էր արել իմ շոտլանդացի սատանի ճուտը:
-Ոչ:
-Ոչ ավել, ոչ պակաս, օգտվել էր իմ անունից և վերականգնել գծի վրա շարժումը՝ առանց իմ կողմից որևէ լիազորություն ունենալու:
-Եվ ի՞նչ, լավ էր լուծել այդ խնդիրը:
-Այո, նույնիսկ շատ լավ:

.... Պարոն Ստոքսի տան նրբագեղ կահավորումն իմ վրա մեծ տպավորություն գործեց: Բայց այդ ամենը ոչինչ էր, գրադարանի մարմարյա բուխարու համեմատ: Բուխարու մարմարե երեսպատման մեջտեղում քանդակված էր բացված գիրք, որի բաց էջերին փորագրված էր.

Ով չի կարողանում մտածել, նա հիմար է,
Ով չի ցանկանում՝ կույր,
Ով չի հանդգնում՝ ստրուկ:

Այս բառերը թափանցեցին հոգուս խորքը: «Երբևէ,- մտածեցի,- ես էլ նման գրադարան կունենամ, և այս բառերը կզարդարեն իմ բուխարին»: Եվ իսկապես, այդ մակագրությունը մինչև հիմա էլ կա իմ նյույորքյան տանը:

.... 1856թ. պարոն Սքոթը նշանակվեց Փենսիլվանյան երկաթգծի տնօրեն: Նա ինձ առաջարկեց իր հետ Ալթունա տեղափոխվել: Ինձ համար չափազանց դժվար էր կտրել բոլոր անձնական կապերը Փիթսբուրգում, բայց այդպես էին պահանջում գործի շահերը, և իմ անձնական հարաբերությունները պետք է երկրորդ պլան նահանջեին:

Մի երեկո տուն վերադառնալիս նկատեցի, որ ինչ-որ մեկն ինձ հետևում է: Հավասարվելով ինձ՝ ասաց.

-Չէի ցանկանա, որ որևէ մեկը մեզ միասին տեսներ: Ժամանակին ինձ լավություն եք արել, և դեռ այն ժամանակ որոշել էի, որ հնարավորության դեպքում կփոխհատուցեմ: Եկա Փիթսբուրգի գրասենյակ և ասացի, որ դարբին եմ ու աշխատանք եմ փնտրում: Դուք ասացիք, որ Փիթսբուրգում հիմա ազատ տեղեր չկան, բայց կարող է ինչ-որ աշխատանք ճարվել Ալթունայում, և եթե մի քանի րոպե սպասեմ, հեռագրով կճշտեք: Ձեզ նեղություն տվեցիք, մեկ անգամ էլ նայեցիք իմ երաշխավորագրերը և ինձ Ալթունա ուղարկեցիք: Շատ լավ աշխատանք ստացա, կինս և երեխաներս տեղափոխվեցին ինձ մոտ, և երբեք կյանքում այդքան լավ չեմ ապրել, ինչպես հիմա: Այդ պատճառով էլ, որպես երախտագիտություն, ցանկանում եմ Ձեզ ծառայություն մատուցել:

Դարբնի դեպքի նման դեպքեր մեկ անգամ չէ, որ պատահել են ինձ: Մինչև հիմա հանդիպում եմ մարդկանց, ում արդեն մոռացել եմ, բայց նրանք հիշում են այն աննշան ծառայությունները, որ ժամանակին մատուցել եմ իրենց: Հատկապես Քաղաքացիական պատերազմի ժամանակ էր հաճախ լինում, երբ աշխատում էի պետական երկաթգծում և հեռագրատանը: Այդ ժամանակ այնպիսի դիրք էի գրավում, որ կարող էի մարդուն ուղարկել երկաթգծով, կարող էի հորը հնարավորություն տալ այցելելու ճակատում վիրավորված կամ հիվանդացած որդուն, կարող էի օգնել զոհվածի դին տեղափոխելու գործում և այլն: Այդպիսի մանր ծառայությունների շնորհիվ հետագայում բազում քաջալերող ապրումներ եմ ունեցել: Այդպիսի արարքները, սովորաբար, այսպես էին տեղի ունենում. դրանք կատարվում էին առանց շահադիտական նպատակների, բայց դրանց համար պարգևատրումը լինում էր այնքան ավելի գեղեցիկ, որքան ցածր էր այն մարդու վիճակը, ով իրեն պարտական էր

համարում այդ ծառայության համար: Շատ ավելի արժեքավոր է ծառայություն մատուցել աղքատ բանվորին, քան միլիոնատիրոջը, ով կարող է հեշտորեն և շռայլորեն փոխհատուցել դրա համար:

Պարոն Սքոթի հետ Ալթունայում մեր երկամյա գործունեության ընթացքում իր հետևանքներով ամենակարևոր իրադարձությունը տեղի ունեցավ դեպի Օհայո կատարած ուղևորություններիցս մեկի ժամանակ: Նստած էի վերջին վագոնում և պատուհանից դուրս էի նայում, երբ մոտեցավ ագարակատիրոջ արտաքինով մի մարդ՝ ձեռքին կանաչ տոպրակ: Նա վագոնավարից իմացել էր, որ ես առնչություն ունեմ Փենսիլվանյան երկաթգծի հետ, և ցանկանում էր ինձ ցույց տալ գիշերային ուղևորությունների համար իր հորինած վագոնը: Այդ խոսքերով նա տոպրակից հանեց ննջավագոնի հատույթի փոքրիկ մոդելը:

Այդ մարդը հետագայում հայտնի Վուդրաֆն էր, ննջավագոնների գյուտարարը: Ինձ համար անմիջապես պարզ դարձավ այդ գյուտի նշանակությունը: Խոստացա Ալթունա վերադառնալուց անմիջապես հետո ներկայացնել այն պարոն Սքոթին և հարցրի՝ կհամաձայնի՞ նա անհրաժեշտության դեպքում Ալթունա գալ: Ննջավագոնների մասին միտքը հանգիստ չէր տալիս. շտապում էի շուտ վերադառնալ Ալթունա և պարոն Սքոթին պատմել այդ մասին: Նա բացասականորեն չվերաբերեց այդ գաղափարին և հանձնարարեց գյուտարարին հեռագրով կանչել: Գյուտարարը չհապաղեց, և քննարկումների արդյունքում պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ նա կառուցում է երկու ննջավագոն, և մեր տեղամասում դրանք դնում ենք շրջանառության մեջ: Դրանից հետո պարոն Վուդրաֆը, ի զարմանս ինձ, հարցրեց, թե չեմ ցանկանա դառնալ իր նախաձեռնության մասնակիցը, և առաջարկեց եկամտի ութերորդ մասը:

Երկար չմտածելով՝ համաձայնեցի: Մտածեցի, որ ինչ-որ կերպ կճարեմ այն փողը, որ անհարժեշտ է նախաձեռնության մեջ իմ բաժինը ներդնելու համար: Վագոնների կառուցման գինը պետք է մարվեր ամսական մասհանումներով: Երբ եկավ առաջին վճարը կատարելու ժամանակը, պարզվեց, որ պետք է վճարեմ երկու հարյուր տասնյոթ ու կես դոլար: Այդ ժամանակ որոշեցի համարձակ քայլ կատարել ու գնացի տեղական բանկիրի՝ պարոն Լոյդի մոտ՝ վարկ վերցնելու: Նրան ներկայացրի ամբողջ գործը, և, ինչպես հիմա հիշում եմ, գրկելով ուսերս՝ նա ասաց. «Իհարկե, ձեզ վարկ կտամ: Դուք միշտ լավ եք վարում ձեր գործերը, Էնդի»: Այսպիսով, ես առաջին անգամ գրեցի մուրհակ և գտա բանկիր, ով ընդունեց այն: Ննջավագոնները մեծ հաջողություն ունեցան.

ամենամսյա շահույթը ծածկում էր մեր մուծումները: Կյանքումս ստացած առաջին խոշոր գումարն այդտեղից էր:

Շուտով մայրս և եղբայրս տեղափոխվեցին ինձ մոտ՝ Ալթունա, և այդ ժամանակ մեր կյանքում մեծ փոփոխություն տեղի ունեցավ. մորս օգնելու համար աղախին վարձեցինք: Սկզբում, տանը ուրիշ մարդ վերցնելուն, մայրս շատ էր դիմադրում, և մեծ ջանքեր պետք եղան նրան համոզելու համար: Մինչ այդ նա ապրում էր բացառապես իր երեխաների համար և ամեն ինչ նրանց համար էր անում, իսկ հիմա պետք է կողմնակի անձ տուն մտներ և տնօրիներ նրա տնտեսությունը: Բայց ես ցանկանում էի նրան ազատել աշխատանքից, որ ավելի շատ ազատ ժամանակ ունենար, հնարավորություն ունենար ավելի շատ կարդալու և ընկերների հետ շփվելու:

-Թանկագին մայրիկ, - ասացի նրան,- մինչև հիմա դու ամեն ինչ արել ես իմ ու Թոմի համար. թույլ տուր, որ հիմա էլ ես ինչ որ բան անեմ քեզ համար: Եկել է քո հանգիստ ապրելու ժամանակը: Մի աղջիկ ընտրիր՝ քեզ օգնական: Դրանով բավականություն կպատճառես Թոմին ու ինձ:

Հաղթանակը մերն էր: Չնայած մորս դիմադրությանը, այդ փոփոխությունն անխուսափելի էր: Տանը աղախին հայտնվեց, բայց նրա գալով՝ վերացավ տան մտերմիկ երջանկության մի մաս, որը հնարավոր է միայն այն ժամանակ, երբ ամբողջ ընտանիքը ապրում է նեղ շրջանում:

Պարոն Սքոթը Ալթունայում մնաց մոտ երեք տարի, մինչև 1859 թ. նրան ընտրեցին ընկերության փոխնախագահ և պետք է տեղափոխվեր Ֆիլադելֆիա:

Պարոն Սքոթը վերադարձավ Ֆիլադելֆիայից, ուր գնացել էր նախագահի հետ բանակցությունների և հայտնեց, որ Ֆիլադելֆիա տեղափոխվելու իր հարցը վերջնականպես լուծված է… Վերջապես ասաց.

-Հիմա դառնանք Ձեզ: Հնարավոր համարո՞ւմ եք ստանձնել փիթսբուրգյան բաժամունքի ղեկավարությունը:

Այդ ժամանակ ես այն տարիքում էի, երբ ամեն ինչ թվում է հնարավոր. աշխարհում չկար այնպիսի բան, որ չխիզախեի: Այդ ժամանակ 24 տարեկան էի, բայց ինձ համար օրինակ էր լորդ Ջոն Ռասելը, ով պատրաստ էր անհրաժեշտության դեպքում ստանձնել նավատորմի հրամանատարությունը:

Այդ պատճառով էլ պարոն Սքոթին ասացի, որ պատրաստ եմ այդ պաշտոնը զբաղեցնել:

Նոր պաշտոնի անցնելուց հետո առաջին ձմեռը շատ դժվար էր: Երկաթգիծը նոր էին վերջացրել, շարժակազմը չէր բավարարում: Ռելսերը դրված էին մեծ քարերի վրա և ամրացված էին չուգունե սեպերով: Հիշում եմ, որ մի գիշերում 47 հատը տրաքել էին: Զարմանալի չէր, որ նման պայմաններում գնացքի գծից դուրս ընկնելը սովորական երևույթ էր: Այդ ժամանակ բաժամունքի ղեկավարը ստիպված էր լինում հաճախ հերթապահել կայարանում, և երբեմն էլ մեկնել գծի այն մասը, որտեղ գնացքը դուրս էր թռել գծերից, և ուսումնասիրել մանրամասները: Մի անգամ ստիպված եմ եղել ութ օր ու գիշեր անցկացնել գծերի վրա, քանի որ դժբախտ դեպքերը տեղի էին ունենում իրար ետևից: Պատասխանատվության զգացումը պահպանում էր էներգիաս, և հոգնածություն չէի զգում: Բավական էր՝ կես ժամի չափ քնեի ինչ որ կեղտոտ բեռնատար վագոնում:

.... Մեր տունն էլ էր այգու մեջ: Այստեղ, ծաղիկների և ճուտիկների հետ, շրջապատված գյուղական կյանքի բոլոր ուրախություններով, մայրս ապրեց իր կյանքի ամենաերջանիկ տարիները: Ծաղիկները նրա կիքն էին, նա չէր համարձակվում դրանք քաղել: Հիշում եմ, թե ինչպես մի անգամ ինձ հանդիմանեց, երբ քաղեցի ինչ որ վայրի բույս. «Բայց դա էլ է կանաչ»,- ասաց նա: Մորիցս ժառանգել եմ այդ հատկությունը...

Այդ սքանչելի վայրում բազմաթիվ ընտանիքներ էին ապրում, և ես շատ տներում էի լինում: Այնտեղ լսում էի այնպիսի առարկաների մասին, որոնց մինչ այդ ծանոթ չէի, և ինձ համար կանոն սահմանեցի. երբ խոսք էր գնում ինձ համար անծանոթ որևէ բանի մասին՝ անպայման ծանոթանալ դրա հետ: Դրա շնորհիվ այնպիսի ուրախ գիտակցություն ունեի, որ ամեն օր նոր գիտելիք եմ ձեռք բերում:

Այստեղ ծանոթացա հարգարժան դատավոր Ուիլկինսի ընտանիքի հետ: Այդ ժամանակ նա մոտ ութսուն տարեկան կլիներ: Նա գեղեցիկ ծերունի էր, դեռ առույգ՝ ոգով ու մարմնով և հիանալի կրթված: Ինձ շատ ուրախացնում էր, որ ես, հավանաբար, ցանկալի հյուր էի այդ տանը: Նրանց տանը հաճախ էին կազմակերպվում համերգներ, կենդանի ներկայացումներ, որոնք ինձ կրթությունս ընդլայնելու հնարավորություն էին տալիս: Դատավոր Ուիլկինսը կյանքի ընթացքում շատ պատմական անձերի էր հանդիպել: Երբեք չեմ

մոռանա այն տպավորությունները, որ իմ վրա թողնում էին խոսակցության ընթացքում ի միջիայլոց ասած նրա բառերը. «նախագահ Ջեքսոնն ինձ ասաց…» կամ «ասացի հերցոգ Վելինգթոնին…»: Այդ րոպեներին ինձ թվում էր, որ պատմության մասնիկներ եմ վերապրում: Այդ տանը լրիվ նոր մթնոլորտ էր, ինչը խթան դարձավ իմ պատվասիրության և հետագա զարգացման համար: Միայն քաղաքական հարցերում իմ և Ուիլինսերի ընտանիքի միջև տարաձայնություն կար:

Մի անգամ, նրանց տուն մտնելով, ամբողջ ընտանիքը տեսա շատ վրդովված մի «սարսափելի դեպքի» պատճառով:

-Պատկերացրեք,- դարձավ ինձ տիկին Ուիլկինսը,- Դալասը (նրանց թոռը) գրում է, որ զինվորական ակադեմիայի պետն իրեն ստիպել է, որ նստի նեգրի կողքին: Լսվա՞ծ բան է: Ի՛նչ խայտառակություն: Նեգրը՝ զինվորական ակադեմիայում:

-Ա՛հ, -ասացի,- տիկին Ուիլկինս, աշխարհում ավելի վատ բաներ են լինում: Վերջերս լսել եմ, որ նեգրերը արդեն երկինք էլ են ընկնում:

Ընդհանուր անհարմար լռություն տիրեց: Եվ միայն մեկ րոպե հետո տիկին Ուիլկինսը ասաց.

-Դա լրիվ ուրիշ հարց է, պարոն Քարնեգի:

.... 1861թվականին, հենց սկսվեց Քաղաքացիական պատերազմը, պարոն Սքոթը, ով ռազմական նախարարի օգնականն էր, պահանջեց, որ գնամ Վաշինգթոն: Ինձ նշանակեցին նրա օգնական՝ ռազմական երկաթգծային և հեռագրական ծառայության բաժնում, բացի դրանից, նրան օգնում էի երկաթգծային խմեր կազմավորելիս:

Քանի որ իմ ենթակայության տակ էին երկաթգծային և հեռագրական ծառայությունները, ես հնարավորություն ունեի տեսնելու նախագահ Լինքոլնին, նախարար Քամերոնին և պարոն Սյուարդին, իսկ երբեմն նաև անձնապես հարաբերվելու նրանց հետ: Պարոն Լինքոլնը երբեմն գալիս էր մեր գրասենյակ և նստում սեղանի մոտ՝ սպասելով հեռագրի պատասխանի կամ ինչ-որ տեղեկանքի: Այդ ոչ սովորական մարդու բոլոր դիմանկարները իրեն շատ նման են: Սովորաբար նրա դեմքը հատուկ տպավորություն չէր գործում: Բայց բավական էր, որ նա հուզվեր կամ ինչ-որ բանի մասին պատմել սկսեր, և

նրա կենդանի աչքերն սկսում էին փայլել՝ դեմքին տալով այնպիսի աշխույժ արտահայտություն, որ հազվադեպ եմ հանդիպել ուրիշ մարդկանց մոտ: Նրա վերաբերմունքը լի էր ազնիվ պարզությամբ, և յուրաքանչյուրի, նույնիսկ գրասենյակի ամենափոքր տղայի համար փաղաքշական բառեր ուներ: Նա հավասարապես ուշադիր էր բոլորի նկատմամբ՝ առանց բացառության, սկսած նախարար Սյուարդից և վերջացրած փոստատարով: Նրա ամբողջ էությունից բխող հմայքի գաղտնիքն այն էր, որ նա աչքի էր ընկնում պարզությամբ և բնականությամբ: Բոլորի սրտերը գրավում էին ոչ այնքան այն, թե ինչ էր նա ասում, որքան այն, թե ինչպես էր ասում: Նա իսկական ժողովրդավար էր և իր խոսքով ու գործով ապացուցում էր, որ բոլոր մարդիկ նրա համար հավասար են:

Այդ ժամանակներում Վաշինգթոնում տիրող քաոսն աննկարագրելի էր: Երբ առաջին անգամ տեսա գլխավոր հրամանատար գեներալ Սքոթին, երկու մարդ նրան թևանցուկ տանում էին դեպի կառքը: Նա զառամյալ, ուժազուրկ մի մարդ էր, ով կաթվածահար էր ոչ միայն ֆիզիկապես, այլև հոգեպես: Եվ անցյալի այդ սուրբ մասունքի վրա էր հանրապետականների զինվորական ուժերի կազմակերպումը: Նրա գլխավոր լիազորված մարդը՝ գեներալ Թեյլորը, նրա արժանի գործընկերն էր: Այդ երկու ծերունիների և էլի մի քանի նույնքան քիչ պետքական աշխատողների հետ էինք ստիպված խորհրդակցել զինվորական ուժերը և զինամթեքը տեղափոխելու մասին: Նրանք բոլորը խիստ կարգապահության կողմնակից էին, բայց վաղուց դուրս էին եկել այն հասակից, երբ մարդն ինչ-որ բանի պետքական է լինում: Երբեմն հարկ էր լինում օրերով սպասել, մինչև նրանցից հնարավոր էր լինում լուծում ստանալ ամենաշտապ խնդիրների վերաբերյալ: Չեմ հիշում, որ այդ ժամանակ որևէ բաժին ղեկավարարեր երիտասարդ, եռանդուն սպա:

Քաղաքացիական պատերազմի ժամանակ երկաթի գինը բարձրացավ մինչև տոննան 130 դոլար: Սակայն գլխավոր դժվարությունը ոչ այնքան թանկությունն էր, որքան տեղափոխման պայմանները: Նոր ռելսերի պակասը այնքան շատ էր, որ Ամերիկայում երկաթգծով տեղաշարժվելը դարձել էր վտանգավոր: 1864թ. որոշեցի ռելսերի արտադրության ընկերություն ստեղծել: Այդպիսով, Փիթսբուրգում ստեղծվեց ռելս արտադրող առաջին գործարանը: Շոգեքարշերի պահանջարկն էլ շատ մեծ էր, և 1866թ. Թոմաս Միլերի հետ միասին հիմնեցինք Փիթսբուրգի շոգեքարշերի գործարանը, որը շատ հաջող էր

աշխատում և այնպիսի համբավ ձեռք բերեց, որ նրա շոգեքարշերը լայն տարածում գտան Հյուսիսային Ամերիկայում:

Ընկերությունն ամեն տարի զգալի շահաբաժիններ էր վճարում և հասավ փայլուն արդյունքների, ինչը «արտադրիր միայն լավագույն ապրանք» պնդման բավարար ապացույց էր: Միշտ հետևել ենք այդ կանոնին:

Ալթունայում տեսել էի Փենսիլվանիայի երկաթգծի արհեստանոցում առաջին մետաղական փոքր կամուրջը, որը կյանքում շատ լավ արդյունքներ ցուցադրեց: Եկա այն համոզման, որ մշտական օգտագործման երկաթգծերում չի կարելի հույս դնել փայտե կարմուջների վրա:

Երկաթգծային կամուրջներ կառուցող՝ Ամերիկայում ձևավորված համարյա ոչ մի ընկերություն հաջողություն չի ունեցել, նրանց կառույցներից շատերը փլվել են, ինչը պատճառ է դարձել ծանր երկաթգծային աղետների, շատ կամուջներ նույնիսկ չեն կարողացել գիմակայել ուժեղ քամուն: Բայց մեր կամուրջներից ոչ մեկի հետ այդպիսի դժբախտություն չի պատահել, չնայած որ մի քանի կամուրջ կառուցել ենք փոթորիկների ենթարկվող տեղերում: Եվ սա ամենևին չպետք է վերագրել երջանիկ պատահականությանը: Մեր կամուրջները կառուցելիս օգտագործում էինք միայն բարձրորակ շինանյութ և երբեք այդ հարցում չենք խնայել, ինքներս էինք արտադրում մեզ անհրաժեշտ թուջը, հետագայում՝ նաև պողպատը, ինքներս էինք մեր աշխատանքի ամենախիստ հսկիչները. եթե պարզվում էր, որ չէինք կարող կառուցել լրիվ անվտանգ կամուրջ, գերադասում էինք հրաժարվելու այդ աշխատանքից:

Մի քանի տարի հատուկ ուշադրություն էի դարձնում մեր կամրջաշինարարական աշխատանքներին և հաճախ անձամբ էի մասնակցում պայմանագրերի կնքմանը: Մի անգամ, այդպիսի մի առիթով մեր ճարտարագետ Ուոլտեր Քեթի հետ մեկնեցինք Դուբյուք: Մենք այն կազմակերպությունների ցանկում էինք, որոնք մրցում էին ամենամեծ երկաթգծային կամրջի կառուցման համար: Այդ կամուրջը պետք է կառուցվել Դուբյուքի մոտ, լայն Միսիսպիի վրա, թռիչքների երկարությունը շատ մեծ էր, այդպիսի կամուրջ ոչ մեկը դեռ չէր կառուցել:

Ձմեռ էր և սահնակերով գնացինք սառած գետի վրայով: Այս ուղևորությունն ապացույցն էր այն բանի, որ հաճախ հաջողությունը կախված է մանրուքներից: Պարզվեց, որ մեր ներկայացրած պայմանները ամենաէժաններից չէին: Մեր

ամենավտանգավոր մրցակիցը Չիկագոյից մի կոնցեռն էր, և հանձնաժողովը որոշեց նրանց տալ պատվերը: Ես դանդաղում էի դուրս գալիս և զրուցում էի տնօրենների հետ, որոնք իրենց կարծիքներն էին հայտնում թուջի և երկաթի մասին՝ չցուցաբերելով խորը տեխնիկական գիտելիքներ: Մենք կամուրջների հենարանները պողպատից էինք կառուցում, մինչդեռ մեր մրցակիցներն այդ նպատակի համար թուջ էին օգտագործում: Հենց դա էլ մեր խոսակցության առարկան էր: Նրանց բացատրում էի, թե ինչ տեղի կունենար, եթե շոգենավը հարվածեր պողպատե կամ թուջե հենարանին: Պողպատե հենարանը, ամենայն հավանականությամբ, միայն կծռվեր, իսկ թուջեն՝ կփշրվեր և ամբողջ կամուրջը կհայտնվեր գետի հատակին: Բարեբախտաբար տնօրեններից մեկը աջակցեց ինձ և հանձնաժողովին հայտնեց, որ ես ճիշտ եմ, գոնե թուջի հարցում: Նա պատմեց, թե ինչպես նախորդ երեկոյան մթության մեջ իր սահնակը բախվել է լապտերասյանը, և սյունը ջարդուփշուր է եղել:

-Ահա, պարոնայք,- ասացի,- սա է ամբողջ ասածս: Վճարեք ավելի թանկ և կունենաք ամուր պողպատե կամուրջ, որը կդիմակայի ցանկացած շոգենավի հարվածի: Մենք երբեք էժանագին կամուրջներ չենք կառուցել և ապագայում էլ չենք կառուցի: Մեր կամուրջներն ի վիճակի են դիմանալու ցանկացած ճնշման:

Լռություն տիրեց: Հետո նախագահողը, ներողություն խնդրելով, ինձ մի քանի րոպեով դուրս հրավիրեց՝ իրենց մենակ թողնելով: Դուրս եկա: Որոշ ժամանակ անց ինձ նորից դահլիճ հրավիրեցին և առաջարկեցին վերցնել պատվերը՝ մի քիչ ավելի էժան գնով: Տարբերությունը ընդամենը մի քանի հազար դոլար էր: Համաձայնեցի:

Փշրված լապտերասյունը մեզ տվեց ամենաշահավետ պատվերներից մեկը, իսկ ամենակարևորը՝ հաղթանակ բոլոր մրցակիցների նկատմամբ:

Այս պատմության խրատն ակնհայտ է: Պատվեր ստանալ ցանկացողը անձամբ պետք է գտնվի այնտեղ, որտեղ որոշվում է դրա ճակատագիրը: Փշրված լապտերասյունը կամ մեկ ուրիշ չնախատեսված հանգամանք կարող է վճռորոշ դերակատարում ունենալ, եթե նա, ով ձգտում է պատվերը ստանալուն, տեղում լինի: Եվ հնարավորության դեպքում չպետք է լքել մարտի դաշտը, նախքան գործի վերջնական լուծումը, և այդ դեպքում կարող եք ձեզ հետ տանել ստորագրված պայմանագիր: Մենք այդպես էլ վարվեցինք Դուբյուքում, չնայած մեզ վստահեցնում էին, որ կարող ենք հանգիստ խղճով մեկնել, և պայմանագիրը մեզ կուղարկեն՝ ստորագրելու: Գերադասեցինք

սպասել՝ պատճառաբանելով, որ ցանկանում ենք ծանոթանալ Դուբյուքի տեսարժան վայրերին:

.... Ինչքան շատ էի ծանոթանում մետաղաձուլական արդյունաբերությանը, այնքան զարմանում էի, որ դրա առանձին պրոցեսների գինը մնում էր չբացահայտված: Հետաքրքրվեցի փիթսբուրգյան մյուս արդյունաբերողներից և համոզվեցի, որ կասկածներս ճիշտ էին: Արտադրությունը պատահականորեն էր կատարվում, և մինչև տարվա վերջը, երբ որոշվում էր ապրանքի առկայությունը և ամփոփվում էին արդյունքները, գործարարները ոչ մի պատկերացում չունեին աշխատանքի արդյունքի մասին: Հաճախ էի լսում, թե ինչպես մարդիկ, ովքեր վախենում էին, որ տարին կփակեն պակասորդով, զարմանում էին, որ շահույթ էին ստացել և հակառակը: Նրանք նման էին մթության մեջ փորող խլուրդի: Նման վիճակը ինձ անթույլատրելի էր թվում և վճռականորեն հանդես եկա մեր արտադրության բոլոր բնագավառներում կշռելու և հաշվառման առաջարկով: Միայն այդպիսի համակարգը թույլ կտար որոշելու յուրաքանչյուր արտադրության գինը և վերահսկելու դրանում ընդգրկված յուրաքանչյուր մարդու աշխատանքը: Պետք է հնարավորություն ունենայինք որոշելու, թե ով է նյութի հետ խնայողաբար վարվում, ով է վատնում, ով է լավագույն արդյունքների հասնում: Պարզվեց, որ դրան հասնելը շատ ավելի դժվար էր, քան թվում էր սկզբում: Ծառայողները դիմադրում էին նոր համակարգի ներդրմանը, և տարիներ պահանջվեց, մինչև այն սկսեց աշխատել այնպես, ինչպես հարկն է: Միայն կամաց-կամաց հասանք այն բանին, որ հնարավորություն ունեցանք լրիվ պատկերացում ունենալու յուրաքանչյուր բաժնի և յուրաքանչյուր աշխատողի մասին:

Ցանկացած արտադրության հաջողության հիմնական պայմաններից մեկը այնպիսի հաշվետվությունն է, երբ յուրաքանչյուր աշխատող սկսում է իրեն պատասխանատու զգալ վստահված նյութերի ու փողի համար: Արդյունաբերողները, ովքեր իրենց ծառայողին առանց գրության հինգ դոլար էլ չէին տա, ամեն օր, առանց հսկելու, նրանց տրամադրում էին տոննաներով նյութ, չիմանալով, թե ինչքան կստացվի վերամշակումից հետո:

1862թ. Ամերիկայում առաջին անգամ ուշադրություն դարձրեցին Փենսիլվանիայի նավթի հարուստ աղբյուրներին: Իմ ընկեր Ուիլյամ Քոլմանը շատ հետաքրքրվեց նոր հայտնագործությամբ և ինձ համոզեց իր հետ գնալ նավթային շրջանները: Ճանապարհորդությունն անասելի հետաքրքիր

ստացվեց: Դա ժողովուրդների իսկական վերաբնակեցում էր, և հոսքը նավթային դաշտեր այնքան մեծ էր, որ հնարավոր չէր բոլորի համար մնալու տեղ գտնել: Բայց տարբեր կողմերից եկող ամբոխը դրան ուշադրություն չէր դարձնում: Բավական էր լինում մի քանի ժամ, որպեսզի արագորեն մի բարաք կանգնեցնեին, և կարճ ժամանակ հետո առկա էին բոլոր կենսական հարմարությունները: Ինձ հատկապես շշմեցրեց այդ մարդկանց տրամադրվածությունը: Կարծես բոլորը հավաքվել էին մի մեծ զբոսախնջույքի: Բոլորը ուրախ էին, կենդանի. թվում էր, թե բավական էր ձեռքդ մեկնեիր և կարող էիր հարստությունը հավաքել:

Ամերիկացիներին բնորոշ հարմարունակությունն այստեղ փայլուն կերպով էր երևում: Քառսը անմիջապես վեր էր ածվում ներդաշնակ կարգի: Կարող եմ գրազ գալ, որ ավելի շուտ հազար ամերիկացիներ, նոր երկիր գալով, կկարողանան կազմակերպվել և ստեղծել դպրոցներ, եկեղեցի, թերթեր, մի խոսքով՝ այն ամենը, ինչը մշակույթին է վերաբերում, քան նույնքան անգլիացիները համաձայնության կգան, թե ում տոհմն է ավելի հարգարժան, և, հետևաբար, ով իր հայրերի արժանիքների հաշվին պետք է առավել իրավունք ունենա ղեկավարելու: Ամերիկացին մի օրենք գիտի՝ Ճանապարհ ամենաարժանավորին:

Սկզբում այդպես ձեռք բերված նավթը Փիթսբուրգում լցնում էին փոքրիկ շշերի մեջ և, որպես դեղ, վաճառում շատ թանկ գնով՝ շիշը մեկ դոլար: Այն ռևմատիզմից բուժելու մեծ համբավ ուներ: Բայց այն բանից հետո, երբ սկսեցին նավթը մեծ քանակությամբ արտադրել և գինը իջավ, նրա բուժիչ հատկություններն սկսեցին թուլանալ:

Իմ կազմակերպություններն արդեն այն աստիճան էին իմ կարիքը զգում, որ որոշեցի հրաժարվել երկաթգծում ծառայելուց և ամբողջ ժամանակս նվիրել սեփական գործերին: 1865թ. դուրս եկա ծառայությունից:

Դրանից հետո էլ երբեք ծառայող չեմ եղել: Ուրիշներից կախվածություն ունեցողը շատ հեռու չի կարող գնալ: Նույնիսկ եթե մարդը հասնի ինչ-որ ընկերության նախագահի պաշտոնի, նա չի կարող իրեն գործի տերը համարել, եթե իհարկե նրան չեն պատկանում բաժնետոմսերի մեծամասնությունը: Նույնիսկ ամենգործունյա նախագահն անընդհատ նեղվում է մյուս բաժնետերերի կողմից, որոնք միշտ չէ որ գործից հասկանում են:

1867թ. պարոն Ֆիփսը, պարոն Վանդերվորտը (նույն ինքը՝ «Վանդին») և ես ճանապարհորդեցինք Եվրոպայով: Շրջագայեցինք Անգլիայում և Շոտլանդիայում և այնտեղից մեկնեցինք մայրցամաք: Եղանք համարյա բոլոր մայրաքաղաքներում, մագլցեցինք բոլոր լեռնագագաթները՝ ուսապարկերը շալակներիս:

Եվրոպայով ճանապարհորդությունն ինձ շատ բան սովորեցրեց: Մինչև այդ շատ քիչ էի հասկանում գեղանկարչությունից և քանդակագործությունից և միայն Եվրոպայում սովորեցի հասկանալ մեծ վարպետների գործերը: Այդ ժամանակ հնարավորություն ունեցա իսկական հաճույք ստանալ երաժշտությունից: Լոնդոնյան Բյուրեղապակյա պալատում Հենդելի տարեդարձն էր նշվում: Ո՛չ մինչև այդ, ո՛չ դրանից հետո երաժշտությունից այդպիսի տպավորություն չեմ ստացել:

Գործարար կյանքում էլ շատ նոր տպավորություններ ստացա: Բավական է կարճ ժամանակով դուրս գալ անդրատլանտյան հանրապետության ջրապտույտից, որպեսզի հասկանաս, թե որքան ինտենսիվ է այնտեղ կյանքն ընթանում: Երբ հայտնվեցի արտասահմանում, այնպիսի տպավորություն ունեցա, որ այնտեղ ոչինչ տեղից չի շարժվում: Բացառությամբ մի քանի մայրաքաղաքների, ամբողջ մայրցամաքը թվում էր անշարժության մեջ թաղված:

.... Բավականին երակար եմ մասնակցել Փիթսբուրգի գործարար կյանքին, որպեսզի պարզեմ տարբերությունը ծրագրված առևտրական աշխատանքի ոգու և սպեկուլյացիայի միջև: Հեռագրատանը ծառայության ընթացքում ծանոթացել եմ մի քանի ֆիրմաների և առանձին մարդկանց, ովքեր աշխատում էին նյույորքյան բորսայի հետ և ուշադիր հետևել եմ նրանց: Իմ կարծիքով, նրանք ուղղակի մոլեխաղի մեջ էին ներքաշվել, բայց այդպիսի ֆիրմաները քիչ էին, նրանց կարելի էր մատների վրա հաշվել: Փիթսբուգը ամենից առաջ արդյունաբերական քաղաք էր:

Նյու-Յորքում, ի զարմանս իմ, լրիվ այլ իրավիճակ էր: Այստեղ գործարար մարդկանց շրջանում շատ քչերն էին, որ չէին խաղում բորսայում: Բոլոր կողմերից ինձ դիմում էին երկաթուղային տարբեր ընկերությունների մասին հարցումներով, որոնց հետ կապ ունեի: Մարդիկ, որ ցանկանում էին իրենց կապիտալը ինչ-որ տեղ ներդնել, ինձ առաջարկում էին միջնորդել՝ ենթադրելով, որ լավ ծանոթ եմ գործարար աշխարհին և կարող եմ շահավետ

ներդնել իրենց գումարները: Ինձ առաջարկում էին մտնել այն ընկերությունների մեջ, որոնք մտադիր էին գնել հայտնի ձեռնարկությունների բաժնեթղթերի մեծամասնությունը: Սպեկուլյացիայի ամբողջ ոլորտը իմ առջև փռվել էր իր բոլոր գայթակղիչ գույներով:

Բայց դիմացա այդ բոլոր գայթակղություններին: Ոչ մի անգամ սպեկուլյատիվ նպատակներով որևէ բաժնեթուղթ չեմ գնել: Միշտ պահել եմ կանոնը. երբեք չգնել այն, ինչի համար չեմ կարող վճարել, և երբեք չվաճառել այն, ինչը ինձ չի պատկանում:

Միայն գործունեության սկզբում որոշ քանակությամբ թանկարժեք թղթեր և բաժնեթղթեր ունեի, որոնք գրանցված էին նյույորքյան բորսայում, դրանց պատճառով ամեն առավոտ, թերթը վերցնելով, ամենից առաջ աչքի էի անցկացնում բարսային հաշվետվությունները: Բայց շատ արագ որոշեցի վաճառել ուրիշ կազմակերպությունների բաժնեթղթերը և կենտրոնանալ սեփական ձեռնարկությունների վրա: Բարեխղճորեն հետևել եմ այդ կանոնին: Սպեկուլյացիան մակաբույծ է, որ խժռում է արժեքները՝ առանց դրանք ստեղծելու:

…. Ննջավագոնների ընկերությունը, որում մասնակցություն ունեի, այնպիսի հաջողություն ուներ, որ հազիվ էր հասցնում պատրաստել պահանջվող քանակությամբ վագոններ: Ուղղակի հնարավորություն չունեինք երկրին մատակարարել պահանջվող քանակությամբ ննջավագոններ, և պարոն Պուլմանը, ով նմանատիպ ձեռնարկություն էր հիմնել երկաթգծային մեծագույն կենտրոնում՝ Չիկագոյում, մեզ համար լուրջ մրցակից էր: Նա էլ, ինձ նման, հասկացել էր, որ Խաղաղօվկյանոսյան երկաթգիծը կարող է ամենաշահաբեր գիծը լինել ննջավագոնների հարցում, և ձգտում էի նույն նպատակին, ինչին և ես: Նա մեր ճանապարհին էր կանգնած:

Այդ ժամանակ մի, իմ կարծիքով, մանր դեպք է տեղի ունեցել, ինչի մասին իմացել եմ պարոն Պուլմանից, որը ցույց է տալիս, որ ամենակրևոր լուծումները երբեմն կախված են մանրուքներից: Խաղաղօվկիանոսյան երկաթգծի ընկերության նախագահը Չիկագո էր եկել: Պարոն Պուլմանը այցելում է նրան: Մտնելով նրա սենյակը՝ սեղանին տեսնում է պարոն Սքոթին ուղղված հեռագիր. «Ննջավագոնների վերաբերյալ ձեր առաջարկությունն ընդունվում է»: Պարոն Պուլմանն ակամա կարդում է այդ բառերը. հեռագիրը այնպես է դրված լինում, որ չէր կարող աչքի չընկնել: Երբ նախագահ Դյուրանը ներս է մտել,

պարոն Պուլմանը ասել է, որ պատահաբար կարդացել է հեռագիրը և ավելացրել.

- Հուսով եմ, որ վերջնական որոշում չեք կայացնի, առանց իմ առաջարկը ուսումնասիրելու:

Պարոն Դյուրանը խոստացել է սպասել: Այդ դեպքից շատ չանցած Նյու-Յորքում պետք է տեղի ունենար Խաղաղօվկիանոսյան երկաթգծի ընկերության խորհրդի նիստը: Ե՛վ ես, և՛ պարոն Պուլմանը նույնպես այնտեղ էինք, քանի որ ձգտում էին մրցանակ շահել, որի արժեքը մենք գիտեինք: Մի երեկո երկուսով հայտնվեցինք «Սբ. Նիկոլայ» հյուրանոցի լայն աստիճաններին: Մենք մի անգամ հանդիպել էինք, բայց ծանոթներ չէինք: Աստիճաններով բարձրանալիս դիմեցի նրան.

- Բարի երեկո պարոն Պուլման: Երկուսով հանդիպել ենք մի ճանապարհի: Ձեզ չի՞ թվում, որ անխոհոմ ենք վարվում:

Նա, ըստ երևույթին, տրամադրություն չուներ խոսակցութայն մեջ մտնելու և կարճ պատասխանեց.

- Ի՞նչ եք ցանկանում ասել:

Նրան ներկայացրեցի իրերի իրական վիճակը. մասնավորապես, մրցակցելով միմյանց հետ, մենք մեզ զրկում էինք այն օգուտներից, որոնց ձգտում էինք:

- Ճիշտ է,- ասաց նա,- բայց ինչպե՞ս վարվենք:

- Միասին գործենք,- պատասխանեցի,- միասնական առաջարկ անենք Խաղաօվկիանոսյան երկաթգծային ընկերությանը: Առաջարկում եմ, որ ձեր և իմ ընկերություններն աշխատեն ձեռք ձեռքի և միավորվեն:

- Եվ ինչպե՞ս պետք է կոչվի այդ ընկերությունը:

- Կանվանենք «Ննջավագոնների պուլմանյան ընկերություն»,- առաջարկեցի:

- Գնանք իմ սենյակը և ավելի մանրամասն քննարկենք,- ասաց ննջավագոնների արքան:

Հետևեցի նրան, և արդյունքում՝ միասին պայմանագիր կնքեցինք Խաղաղօվկիանոսյան ընկերության հետ: Հետագայում վերջնական արդյունքը եղավ մեր ընկերությունների միավորումը:

Պարոն Պուլմանը տիպիկ ամերիկյան կարիերա է արել, այնպես, որ արժե նրա մասին մի քանի խոսք ասել: Նա հասարակ հյուսն է եղել, բայց երբ հարկ եղավ Չիկագոն բարձրացնել, նա սկսեց տները բարձրացնելու և տեղափոխելու պատվերներ ընդունել: Դա նրան զգալի եկամուտ է բերել, այնպես, որ քչից սկսելով, նա վերջում այդ բնագավառում ամենամեծ գործարարներից մեկն է դարձել: Եթե պետք էր լինում երեք մետր բարձրացնել մեծ հյուրանոցը՝ առանց հաճախորդներին անհանգստացնելու, դիմում էին պարոն Պուլմանին: Նա այն եզակի մարդկանցից էր, ովքեր ակնթարթորեն կողմնորոշվում են ցանկացած իրավիճակում և, այսպես ասած, լողում են այնտեղ, որտեղ հոսանքն ավելի ուժեղ է: Նա, ինչպես և ես, հասկանում էր, որ Ամերիկան չի կարող առանց ննջավագոնների:

Մեր արևելյան ընկերությունը չէր կարող մրցակցել մի ընկերության հետ, որը հիմնել էր այնպիսի ուժեղ մարդ, ինչպիսին պարոն Պուլմանն էր: Սա ինձ համար ակնհայտ էր: Ճիշտ է, արտոնագիրը մեր ընկերության սեփականությունն էր, և պարոն Վուդրաֆը, ննջավագոնների հայտնագործողը մեր գլխավոր բաժնետերն էր: Բայց, ամեն դեպքում, մեզ համար ավելի ձեռնտու էր միասին աշխատելը: Բանակցությունները վարելն ինձ էր հանձնարարված, և արդյունքում մեր ընկերությունները միավորվեցին:

Մի անգամ պարոն Սքոթից հեռագիր ստացա, որով ինձ հրավիրում էր Ֆիլադելֆիա՝ հանդիպման: Հարցը հետևյալն էր: Որոշ ժամանակ առաջ պարոն Սքոթը միտք էր հղացել կառուցելու Տեխաս-Խաղաղօվկիանոսյան երկաթգիծ: Նրան համառորեն խորհուրդ էի տվել, որ չսկսի այդպիսի մեծ գծի կառուցումը, քանի դրա համար անհրաժեշտ կապիտալը չունի, և հույսը չդնի վարկի վրա: Բայց չէր հետևել իմ խորհրդին: Նա հայտնեց, որ հասել է մեծ վարկը մարելու ժամկետը, որը նա վերցրել էր Լոնդոնում՝ Մորգանից, և վերջինս համաձայն կլինի երկարացնել վճարման ժամկետը, եթե ես մասնակցություն ունենամ այդ վարկում: Ես հրաժարվեցի: Այդ ժամանակ իմ առջև հարց դրվեց՝ պատրաստ եմ իմ հրաժարումով սնանկացման դատապարտել ընկերներիս: Դա կյանքիս ամենատանջալի պահերից մեկն էր, բայց ոչ մի րոպե չտատանվեցի: Իմ ամբողջ կապիտալը ներդրված էր մեր ձեռնարկություններում, և չէի կարող այնտեղից նույնիսկ դոլար վերցնել: Ես, թեև համեստ չափերի, բայց մեր կոնցեռնի

ֆինանսիստն էի և պատասխանատվություն էի կրում նրա մասնակիցներից յուրաքանչյուրի ճակատագրի համար:

Չնայած որ չէի խրախուսում պարոն Սքոթի այդ ծրագիրը, այնուամենայնիվ ներդրեցի այդ գործում իմ բաժինը՝ կանխիկ 250 հազար դոլար: Աշխարհում ոչ մի բան չէր կարող ինձ ստիպել իմ անունը տրամադրել ուրիշի ձեռնարկումների համար. իմ անունով պատասխան եմ տալիս միայն իմ ֆիրմայի համար:

Գործարար մարդու համար չկա ավելի մեծ վտանգ, քան ուրիշի փոխարեն երաշխավորելը: Այդ վտանգից խուսափել կարելի է, եթե երկու հարցի պատասխանես: Առաջինը. անհարաժեշտության դեպքում կունենա՞մ այդքան ազատ միջոցներ, որ վճարեմ իմ երաշխավորած գումարը: Եվ երկրորդը. պատրա՞ստ եմ զրկվելու այդ փողից այն մարդու համար, ում երաշխավորել եմ: Դրական պատասխանի դեպքում, միայն դրական, կարելի է ընկերոջը այդպիսի ծառայություն մատուցել: Բայց այդ դեպքում հարց է առաջանում. ավելի լավ չէ՞ միանգամից այդ գումարը կանխիկ տալ, քան երաշխավորագիր ստորագրել: Վստահ եմ, որ շատ դեպքերում ավելի լավ է այդպես վարվել:

.... Գործերս Լոնդոնում այնքան հաջող էին գնում, որ քիչ էր մնում հեռանայի արդյունաբերական գործունեությունից և ամբողջությամբ զբաղվեի ֆինանսական և բանկային գործունեությամբ: Բայց ինձ ավելի շատ արդյունաբերությունն էր ձգում: Ցանկանում էի նյութական արժեք ստեղծել: Այդ պատճառով էլ իմ բոլոր ազատ փողը ներ էի դնում մեր փիթսբուրգյան գործարաններում: Մեր գործին մեծ ապագա էր սպասում, և որոշեցի ամբողջությամբ նվիրվել մետաղագործական արդյունաբերությանը:

Մաքսային սակագնի հարցում կառավարության բռնած դիրքը ամբողջովին ցրեց իմ մտավախությունները մեր գործ ապագայի հարցում: Տեսնում էի, որ Քաղաքացիական պատերազմը ամերիկական ժողովրդի մոտ Եվրոպայից անկախ, ինքնաբավ ազգ դառնալու վճռականություն էր առաջացրել: Մինչ այդ Ամերիկան իր պողպատի և մասամբ երկաթի կարիքները բավարարում էր արտասահմանից, հիմնականում Անգլիայից, ներկրմամբ: Հիմա ժողովուրդը պահանջում էր, որ այդ ամենը արտադրվի երկրում, և Կոնգրեսը պաշտպանեց հայրենական արդյունաբերությունը՝ ներկրվող պողպատե ռելսերի համար սահմանելով դրանց գնի քսանութ տոկոսի չափսով սակագին:

…. Հիմա, երբ ետ եմ նայում, անհավանական է թվում, որ անցյալ հարյուրամյակի յոթանասունականներին Ամերիկայում չուգունի արտադրության գործում քիմիան ոչ մի դեր չուներ:

Մենք հին կառավարչին փոխարինեցինք նորով և նրան տեղակալ հրավիրեցինք քիմիկոս դոկտոր Ֆրիկեին, կրթված գերմանացու, ով մեզ այնպիսի բաներ բացահայտեց, որոնց մասին չէինք էլ մտածում: Օրինակ, իմացանք, որ ամենալավ հանքերի հանքաքարը հաճախ սպասվածից տասը, տասնհինգ և նույնիսկ քսան տոկոս ավելի քիչ երկաթ էր պարունակում: Հանկարծ պարզվեց, որ մինչ այդ վատ համբավ ունեցող հանքերը բարձր կարգի հանքաքար էին տալիս: Այն, ինչ լավ էր համարվում, պարզվեց՝ վատ է, և հակառակը. ամեն ինչ գլխիվայր շուռ եկավ: Չուգունի արտադրության հարցում մեր անտեղյակության ինը տասներորդ մասը հալվեց, ինչպես մեղրամոմը՝ քիմիական գիտելիքների վառ արեգակի տակ:

Ի՞նչ հիմարն էինք եղել: Բայց կարող էինք մխիթարվել նրանով, որ մեր մրցակիցները ավելի հիմար էին:

Տարիներ էին անցել, ինչ մենք չուգունի մեր ամբողջ արտադրությունը վստահել էին քիմիկոսներին, իսկ ուրիշ դոմնյան վառարանների տերերը շարունակում էին պնդել, որ նրանց միջոցները չէին բավարարում քիմիկոս պահելու համար:

Եթե իրերի վիճակը նրանք պարզ պատկերացնեին, ապա վաղուց հասկացած կլինեին, որ դրանց շահագործումը առանց քիմիկոսի ավելի թանկ էր նստում:

…. 1873թ. սեպտեմբերին ֆինանսական ճգնաժամ սկսվեց: Դա կյանքիս ամենատագնապալի շրջանն է եղել: Երբ հանգստանում էի Ալեգանյան լեռներում, մի առավոտ հեռագիր ստացա՝ «Jay Cooke & Co» ֆիրմայի սնանկացման մասին: Դրանից հետո նոր սնանկացումների մասին լուրերը թափվում էին: Մեկը մյուսի ետևից ֆիրմաները դադարեցնում էին վճարումները: Ամեն առավոտ մեզ հարց էինք տալիս, թե ում հերթն է հիմա: Ցանկացած նոր սնանկացում թուլացնում էր մյուսների վճարունակությունը, մինչև, որ երկրում ամբողջ գործարար աշխարհը կաթվածահար եղավ:

Փոթորկի առաջին պոռթկումը այն ֆինանսական շրջաններին դիպավ, ովքեր գործ ունեին բորսայի հետ: Որոշակի ժամանակ անցավ, մինչև այն զգաց

մնացած գործարար աշխարհը: Բայց վիճակը անկասելիորեն վատանում էր, և վերջապես անկումը բռնկվեց, ինչը իր հետ անդունդ տարավ Տեխաս-Խաղաղօվկիանոսյան երկաթգծի իմ ընկերներին: Դա ինձ համար ամենածանր հարվածն էր: Սկզբում ոչ ոք չէր հավատում, որ չնայած Տեխասյան խմբի հետ իմ անձնական կապերին, նրանց ֆինանսական պարտավորություններին չէի մասնացում:

Փիթսբուրգի փոխանակման բանկի տնօրենը Նյու-Յորքում գտնված ժամանակ էր ստացել պարոն Սքոթի և պարոն Թոմասի սնանկացման լուրը: Նա անմիջապես շտապել էր Փիթսբուրգ և խորհրդի նիստում հայտարարել, որ իմ կապ չունենալը այդ գործի հետ անհավատալի է համարում: Այդ հիմքով առաջարկել է, որ բանկը մեր հաշիվների հետագա վարումից խուսափի:

Այդ բանն իմանալով, որոշեցի անմիջապես գործել: Առաջին իսկ գնացքով Փիթսբուրգ մեկնեցի և բոլոր շահախնդիր անձանց ապացուցեցի, որ չնայած Տեխաս-Խաղաղօվկիանոսյան երկաթգծի բաժնետեր եմ, բայց իմ բաժինը կանխիկ եմ վճարել: Պարտաթղթերից ոչ մեկի վրա իմ ստորագրությունը չկա: Նրանց նկատմամբ ոչ մի ֆինանսական պարտավորություն չունեի, ինչը որ ունեի ձեռքիս, դրա համար վճարել էի, և ինձ էր պատկանում: Իմ բոլոր պարտավորությունները սահմանափակվում էին իմ սեփական ձեռնարկություններով, և այդտեղ ինձ պատասխանատու էի համարում յուրաքանչյուր դոլարի համար:

Դրանից հետո ֆինանսական շրաջաններում մեր նկատմամբ բոլոր կասկածները ցրվեցին և տեղը զիջեցին վստահությանը: Մեր վարկը անսասան դարձավ:

Ինձ ծրագիր ներկայացրին, որի համաձայն գործարանը պետք է երկու ստորաբաժանումից բաղկացած լիներ. դրանցից մեկը պետք է ղեկավարեր մի շոտլանդացի՝ պարոն Սթիվենսոնը, մյուսը՝ պարոն Ջոնսը: Ես այն կարծիքին էի, որ մի ձեռնարկությունում չի կարող լինել նույն իրավասություններով երկու ղեկավար: Նման պայմաններում գործը կործանման է դատապարտված, ինչպես երկու գլխավոր հրամանատար ունեցող զորքը, կամ երկու նավապետ ունեցող նավը: Հայտարարեցի.

-Այսպես չի լինի: Ես չեմ ճանաչում ո՛չ պարոն Սթվենսոնին, ո՛չ պարոն Ջոնսին, բայց հրամայել կարող է միայն նրանցից մեկը, և միայն այդ մեկը պետք է պատասխանատվություն կրի:

Ընտրությունը կանգնեց պարոն Ջոնսի վրա: Այդպիսով «նավապետ» ունեցանք:

«Նավապետը» այդ ժամանակ շատ երիտասարդ էր ու շատ աղքատ. նա մեզ մոտ տեղափոխվել էր հարևան ֆաբրիկայից, որտեղ օրական երկու դոլարով մեխանիկ էր աշխատում: Շուտով համոզվեցինք, որ նա հիանալի մարդ է: Ռելսերի արտադրության մեր հաջողությունների մեծ մասով նրան ենք պարտական: Հետագայում առաջարկեցինք, որ նա մասնակցություն ունենա մեր եկամուտներում, ինչը նրան միլիոններ կբերեր: Նա հրաժարվեց:

- Ոչ, - ասաց, - չեմ ցանկանում շեղվել դեպի ձեռնարկության առևտրային կողմը: Բավականին գործ ունեմ անելու հենց արտադրությունում: Բայց, եթե կարծում եք, որ արժանի եմ, բարձրացրեք աշխատավարձս:
- Շատ լավ, նավապետ, քեզ նշանակում ենք Միացյալ Նահանգների նախագահի աշխատավարձ:
- Դրանից չեմ հրաժարվի, - պատասխանեց Ջոնսը:

Պարոն Ջոնսի բերած մեքենաները, նրա աշխատանքային ծրագրերը, նրա ընտրած մարդիկ այնքան հաջող էին, որ գործը փայլուն էր գնում, և արդյունքները գերազանցեցին սպասելիքները: Բավական է ասել, որ հենց առաջին ամսում 11 հազար դոլար աշխատեցինք: Կարևոր էր նաև, որ հաշվառման մեր համակարգը հնարավորություն էր տալիս մեծ ճշտությամբ հաշվարկել եկամուտը: Մեր մետաղաձուլական գործարանների փորձը ցույց տվեց, թե ինչ նշանակություն ունի այդ համակարգը: Ձեռնարկության համար չկա ավելի ձեռնատու բան, քան գրասենյակային մի քանի աշխատողներ, որ արտադրության ընթացքում մի ստորաբաժանումից մյուսը գնացող նյութերի ճշգրիտ հաշվառում են վարում:

.... Մեր ձեռնարկության հաջողություններով թևավորված, հնարավոր համարեցի այս անգամ ավելի երկարատև արձակուրդ վերցնել և իրականացնել վաղեմի երազանքս՝ ճանապարհորդել աշխարհի շուրջը:

Եվ այսպես, 1878թ. պարոն Վանդևորտի («Վանդի») հետ ճանապարհ ընկանք: Հետս մի քանի ծոցատետր էի վերցրել և ամեն օր տպավորություններս գրանցում էի:

Սկզբում գրքի մասին չէի էլ մտածում, ուղղակի կարծում էի, որ գրառումներս մի քանի օրինակով կարտագրեմ և կտամ բարեկամներիս: Բայց, երբ տեսնում ես սեփական մտքերդ գրքում տպագրված, դա լրիվ ուրիշ զգացողություն է:

Երբ տպարանից ուղարկեցին մի քանի օրինակ, նորից նայեցի, որպեսզի հասկանամ՝ արժի ուղարկել ընկերներին: Որոշեցի, որ արժի:

…. Շուրջերկրյա ճամփորդությունը ինձ համար նոր հորիզոններ բացեց: Ամբողջ մտավոր կյանքս նոր ուղղություն ստացավ:

Ճանապարհորդության արդյունքում ինչ որ ներքին խաղաղություն զգացի: Այնտեղ, ուր քաոս էր տիրում, հիմա կարգ հաստատվեց: Հոգիս խաղաղվեց: Վերջապես գտա իմ փիլիսոփայությունը: Քրիստոսի՝ «Աստծո արքայությունը ձեր մեջ» բառերը ինձ համար նոր իմաստ ձեռք բերեցին: Աստծո արքայությունը ո՛չ անցյալում, ո՛չ ապագայում, այլ ներկայում, այստեղ, երկրի վրա: Մեր բոլոր պարտականությունները կապված են ներկա աշխարհի և ներկա ժամանակի հետ, և իզուր են այդ սահմաններից դուրս նայելու բոլոր ձգտումները:

Յուրաքանչյուրը, ով գոնե մի փոքր հնարավորություն ունի, պետք է շուրջերկրյա ճամփորդություն կատարի, թեկուզ մեծ զոհողությունների գնով: Դրա համեմատ մյուս բոլոր ճամփորդությունները կիսատ են թվում, որովհետև տալիս են ամբողջի միայն առանձին մասերի մասին պատկերացումներ: Բայց նա, ով այցելել է բոլոր երկրները, տուն է վերադառնում այն զգացողությամբ, որ տեսել է ամբողջը, ինչ կարելի էր տեսնել (իհարկե, ընդհանուր գծերով): Սփռված մասերը հավաքվում են մեկ ամբողջության մեջ, և մարդկությունը ճանաչում ես իր տարբեր կերպարներում՝ տարբեր գաղափարներով և նպատակներով:

Շուրջերկրյա ճանապարհորդը, Արևելքի սուրբ գրքերը ուսումնասիրածի նման, հանգում է եզրակացության, որ յուրաքանչյուր ժողովուրդ իր կրոնը համարում է լավագույնը: Յուրաքանչյուր ժողովուրդ ուրախանում է իրեն բաժին ընկած ճակատագրով, և համարում է, որ հյուր գնալը լավ է, բայց տանն ավել լավ է:

.... Նորդկապ (հրվանդան, համարվում է Եվրոմիության ամենահյուսիսային կետը. Գ.Հ) գնալու ճանապարհին այցելեցինք եղջերուների արոտավայր Լապլանդիայում: Մեզ հետ էր մեր նավի նավաստիներից մեկը: Ետդարձի ճանապարհին միասին էինք քայլում. մոտենալով ծովախորշին, կանգնեցինք և սկսեցինք դիտել դիմացի ափը, որտեղ տեսանք ցաքուցրիվ մի քանի խրճիթ և կառուցվող երկհարկանի մի տուն:

- Սա ի՞նչ տուն է,- հարցրեցի:
- Սա, հավանաբար, մի մարդու տուն է, ով Տրոմսյոյում է ծնվել, արտասահմանում շատ փող է աշխատել և հիմա վերադարձել է, որպեսզի այստեղ ապրի իր կյանքի մանցած մասը: Նա շատ հարուստ է:
- Ինձ պատմել եք, որ նավարկումների ընթացքում շրջել եք ամբողջ աշխարհով: Գիտեք Լոնդոնը, Նյու-Յորքը, Կալկուտան, Մելբուրնը և բոլոր մյուս քաղաքները: Որտե՞ղ կցանկանայիք ապրել տարիքն առնելուց հետո, եթե այս մարդու նման հարուստ լինեք:

Նրա աչքերը փայլատակեցին, և պատասխանեց.

- Օ, աշխարհում Տրոմսյոյի նման ուրիշ տեղ չկա:

Այդ Տրոմսյոն գտնվում է արկտիկական գոտում, և գիշերը այնտեղ կես տարի է տևում, բայց նա ծնվել էր Տրոմսյոյում: Օ՜, հայրենիք, սիրելի հայրենիք:

Կյանքի շատ պայմաններ և բնության օրենքներ մեզ թվում են անարդար և դաժան, բայց կան շատերը, որոնք շշեցմնում են իրենց գեղեցկությամբ: Անկասկած, դրանց թվում է սերը հայրենիքի նկատմամբ՝ առանց ուշադրություն դարձնելու, թե ինչպիսին է այդ հայրենիքը և որտեղ է:

.... Դանֆերմլինում ինձ նորից հաջողվեց լինել 1881թ. ամռանը, երբ դրվում էր իմ հիմնադրած առաջին գրադարանի հիմնաքարը: Արդեն, մեկ ուրիշ տեղ, պատմել եմ, որ այս հարցում գնացել եմ հորս հետքերով: Քաղաքը որոշեց այն անվանել «Քարնեգիի գրադարան»: Շինարարությունն իրականացնող ճարտարապետը ինձ դիմեց՝ անձնական զինանշանի հարցով: Պատասխանեցի, որ զինանշան չունեմ, բայց առաջարկեցի մուտքի դռան վերևում քանդակել ծագող արև՝ տարամիտվող ճառագայթներով և ներքևում գրել. «Թող լույս լինի»:

Այդ այցելության ընթացքում մի քանի ընկերներիս հետ ձիով անցանք ամբողջ Բրիտանիան: Այդ ճանապարհորդությունը կյանքիս ամենաերջանիկ

հիշողություններից է: Ամեն երեկո նոթատետրում գրանցում էի այդ օրվա տպավորությունները: Այդ գրանցումների հետ նույնը կատարվեց, ինչ «Աշխարհի շուրջը» գրքի հետ: Սկզբում չէի մտածում, թե դրանցից լուրջ բան կստացվի, բացի, թերևս թերթի հոդվածից կամ ընկերներիս համար կազմած կարճ հաշվետվությունից: Բայց ձմռան մի տհաճ օր, երբ ցանկություն չունեի գնալ երեք մղոն հեռավորության վրա գտնվող գրասենյակս, մտածում էի, թե ինչով լցնեմ ազատ ժամանակս և հիշեցի ձիերով ճանապարհորդությանմ մասին: Հանեցի նոթատետրերս և գարձի անցա: Գործը շատ լավ գնաց և երեկոյան արդեն մոտավորապես չորս հազար բառ գրել էի: Երեք շաբաթից գիրքը պատրաստ էր: Այն հանձնեցի հրատարակիչ Սքրիբներին և խնդրեցի մի քանի հարյուր օրինակ հրատարակել՝ հեղինակային իրավունքով: Գիքը բարեկամներիս դուր եկավ:

Որոշ ժամանակ անց նրանցից մեկը փոխանցեց, որ Սքրիբները կարդացել է գիրքը և առաջարկում է այն հրատարակել լայն հասարակության համար: Փառասեր հեղինակին դժվար չէ համոզելը, որ նրա ստեղծագործությունը շատ լավն է, և ես համաձայնեցի: Այդպիսով լույս տեսավ երկրորդ գիրքս՝ «Ամբողջ Բրիտանիան՝ քառակառքով»:

1886 թվականի վերջը ինձ ծանր վիշտ մատուցեց: Կարճատև հիվանդությունից հետո մահացան մայրս և եղբայրս. այդ ժամանակ, ես ծանր հիվանդ էի՝ տիֆ, և պայքարում էի մահվան դեմ: Այդպես ավարտվեց իմ երջանիկ երիտասարդությունը, և աշխարհում միայնակ մնացի:

Բժիշկներն իմ վիճակն անհուսալի էին համարում: Ինձ ոչինչ չէին հայտնել մորս և եղբորս ծանր վիճակի մասին: Իսկ երբ լուր ստացա, որ նրանք այլևս չկային, ինձ համար շատ բնական էր, որ ես էլ հետևելու եմ նրանց:

Բայց ճակատագիրն այլ կերպ վարվեց: Աստիճանաբար սկսեցի առողջանալ: Այդ ժամանակ մի սփոփանք ունեի, հույսի մի ճառագայթ: Արդեն մի քանի տարի էր, որ ծանոթ էի օրիորդ Լուիզա Ուայդֆիլդին: Նա առաջարկս միանգամից չընդունեց: Իմ դեմ էր հարստությունս, և նա մտածում էր, որ ինքը իմ կյանքում ոչինչ չէր նշանակի: Նրա իդեալը կյանքի համար պայքարող մարդն էր, ում համար ինքը իսկական ընկեր կլիներ, ինչպես իր մայրը՝ հոր համար: Քսանմեկ տարեկանում զրկվել էր հորից, և այդ ժամանակից ընտանիքի հոգսը ամբողջությամբ ընկել էր նրա վրա: Հիմա նա արդեն քսանութ տարեկան էր և լրիվ կազմակերպված մարդ էր: Երբեմն գրում էինք իրար:

Երբ առողջությունս այնքան լավացավ, որ կարող էի դիմանալ տեղափոխությանը, պրոֆեսոր Դենիսը ինձ տեղափոխեց նյույորքյան իր բնակարանը, և այնտեղ՝ նրա անձնական հսկողության տակ էի, մինչև լրիվ ապաքինվելս: Ինձ այցելեց օրիորդ Ուայդֆիլդը: Հիմա նա տեսնում էր, որ իր կարիքն ունեմ: Աշխարհում միայնակ էի մնացել: Հիմա նա կարող էր լինել իմ ընկերը՝ բոլոր հարցերում: Հիմա նրա սիրտը և գիտակցությունը տարահունչ չէին: 1887թ ապրիլի 27-ին Նյու-Յորքում պսակվեցինք:

.... Արդեն քսան տարի է անցել այն ժամանակից, երբ կինս մուտք գործեց իմ կյանք, որը լրիվ ամայացել էր մորս և եղբորս մահից հետո: Նա ինձ այնքան երջանկություն է պարգևել, որ բոլորովին չեմ պատկերացնում կյանքն առանց նրա:

.... Մեկ տոննա պողպատ ստանալու համար պետք էր մեկուկես տոննա հանքաքար հանել, հարյուր մղոն տեղափոխել մինչև լճերը, բարձել նավը, հարյուր մղոն ջրով տեղափոխել, հետո նորից բարձել վագոնները և երկաթգծով հարյուր հիսուն մղոն տեղափոխել մինչև Փիթսբուրգ. հետո պետք էր մեկուկես տոննա ածուխ հանել, այն կոքս դարձնել և երկաթգծով հիսուն մղոն տեղափոխել: Դրանից բացի, պետք էր մեկ տոննա կիր հանել և հարյուր հիսուն մղոն տեղափոխել: Հնարավո՞ր էր այս պայմաններում, առանց վնասի, վաճառել պողպատի երեք ֆունտը երկու ցենտով: Խոստովանում եմ, որ ինձ էլ դա հասկանալի չէր, բայց՝ այդպես էր:

Ամերիկան մոտ ապագայում պողպատաձուլական արտադրության ամենաէժան երկիրը կդառնա: Ներկա պայմաններում Ամերիկան կարող է մատակարարել նունյքան էժան պողպատ, ինչպես մյուս երկրները, իսկ նրա բանվորները կստանան ամենաբարձր աշխատավարձը՝ մյուսների համեմատ: Տեխնիկայի բնագավառում թանկարժեք բանվորը ամենաէժանն է: Եվ Ամերիկան այս հարցում բոլոր երկրներից առաջ է:

.... Արժե պատմել բանվորների հետ ունեցած մի քանի կոնֆլիկտների մասին, որոնք ինձ հաջողվել է հարթել: Մի անգամ դոմնային արտադրությունում ընդգրկված բանվորներից բողոք ստացանք՝ բազմաթիվ ստորագրություններով, որտեղ նրանք հայտարարում էին, որ երկուշաբթի օրը ժամը չորսին կդադարեցնեն աշխատանքը, եթե ընկերությունը չահամաձայնի բարձրացնել աշխատավարձերը: Բայց հարցն այն էր, որ սակագնի ժամկետը, որի հիման վրա ձեռք էր բերվել համաձայնությունը, լրանում էր տարվա

վերջում՝ մի քանի ամիս հետո: Ես ինձ ասացի, եթե այս մարդիկ մտադիր են պայմանագիրը խախտել, ապա ոչ մի իմաստ չունի նրանց հետ նոր պայմանագիր կնքելը: Չնայած դրան, գիշերային գնացքով Նյու-Յորքից մեկնեցի և մյուս առավոտյան արդեն գործարանում էի:

Տնօրենին խնդրեցի, որ խորհրդակցության հրավիրի բանվորական երեք կոմիտեներին՝ ոչ միայն դոմնային արտադրության, որը անմիջապես ներգրավված էր այս գործում, այլև պողպատաձուլական և գլանվածքային արտադրամասերի:

Առաջինը դիմեցի գլանվածքային արտադրամասի ներկայացուցչին: Նա ակնոցով մի ծերուկ էր:

- Պարոն Մաքեյ, կարծեմ մենք ձեզ հետ պայմանագիր ունենք մինչև տարվա վերջը:

Նա դանդաղ հանեց ակնոցը, հուզված պահեց ձեռքում և ասաց.

- Այո, մենք պայմանագիր ունենք, և, պարոն Քարնեգի, ձեր ունեցած ամբողջ փողն էլ չի բավարարի, որպեսզի ստիպեք մեզ խախտել այն:

- Այսպես խոսում է իսկական ամերիկացի բանվորը-, պատասխանեցի,- հպարտանում եմ ձեզնով: Պարոն Ջոնս (նա պողպատաձուլական արտադրամասի բանվորների առաջնորդն էր), ձեզ հե՞տ էլ ունենք այդպիսի պայմանագիր:

Պարոն Ջոնսը փոքրամարմին մարդ էր: Նա խոսեց դանդաղ, շեշտադրումներով:

- Պարոն Քարնեգի, երբ ինձ պայմանագիրը տալիս են ստորագրելու, ես այն ուշադիր կարդում եմ, և, եթե ինձ ձեռք չի տալիս, չեմ ստորագրում, իսկ եթե ձեռք է տալիս, ստորագրում եմ, և եթե այն ստորագրում եմ, ես այն կատարում եմ:

- Այստեղ էլ խոսում է ամերիկացի գիտակից բանվորը,- ասացի:

Նույն հարցով դիմեցի դոմնային արտադրության ներկայացուցչին: Դա Քելի ազգանունով մի իռլանդացի էր:

- Պարոն Քելի, ասացեք, մենք ունե՞նք ձեզ հետ կնքած պայմանագիր մինչև տարվա վերջը:

Պարոն Քելին պատասխանեց, որ ինքը չի կարող ճշգրիտ ասել: Ինչ-որ թուղթ եղել է, որը ինքը ստորագրել է, բայց այն չի կարդացել, ինչպես հարկն է և չի հասկացել, թե ինչ է գրված եղել:

Մեր տնօրենը, կապիտան Ջոնսը՝ տաք գլուխը, վրա տվեց:

- Պարոն Քելի, շատ լավ հիշում եք, որ ձեզ հետ երկու անգամ կարդացել և քննարկել ենք այդ թուղթը:

- Հանգիստ, հանգիստ, կապիտան,- կանգնեցրեցի նրան:- Պարոն Քելին սեփական կարծիքը շարադրելու իրավունք ունի: Ես էլ, երբեմն թղթեր եմ ստորագրում՝ առանց դրանք կարդալու: Պարոն Քելին ասաց, որ ինքը առանց կարդալու ստորագրել է, և մենք պետք է հավատանք նրա խոսքին: Բայց պարոն Քելի, ես այն կարծիքին եմ, որ եթե մարդը անզգուշություն է ունեցել պայմանագիրը ստորագրելու, նա պետք է այն կատարի, և իր համար օրենք դարձնի մյուս անգամ ավելի զգուշավոր լինելը: Ձեզ համար ավելի լավ չի՞ լինի, որ մնացած չորս ամիսն էլ աշխատեք այդ պայմանագրով, իսկ երբ հարկ կլինի նոր պայմանագիր ստորագրելու, ավելի ուշադիր լինեք և աշխատեք հասկանալ էությունը:

Սրան չպատասխանեց: Այդ ժամանակ տեղիցս վեր կացա և ասացի.

- Դոմնային արտադրության ներկայացուցիչներ, սպառնացել եք խախտել պայմանագիրը և, ինչը կարող է ճակատագրական լինել, դադարեցնել աշխատանքը, եթե մինչև ժամը չորսը չստանաք ձեր պահանջների դրական պատասխանը: Դեռ ժամը երեքը չկա, իսկ պատասխանը պատրաստ է: Կարող եք թողնել դոմնային վառարանը: Ավելի լավ է գործարանը խոտով ծածկվի, քան մենք նահանջենք ձեր սպառնալիքի առաջ: Բանվորի ամենաամոթալի օրը այն կլինի, երբ նա կխախտի պայմանագիրը և ինքն իրեն պատվից կզրկի: Ես ձեզ էլ ասելիք չունեմ:

Բանվորական կոմիտեն դանդաղ հեռացավ: Հետո մեր ծառայողներից իմացանք, թե ինչպես էր ավարտվել այդ պատմությունը դոմնային արտադրամասում: Քելին և իր ընկերները վերադարձել են արհեստանոցներ:

Այնտեղ արդեն բանվորների մեծ ամբոխ էր հավաքվել, ովքեր անհամբերությամբ սպասում էին նրանց: Ամբոխը տեսնելով՝ Քելին բղավել է.

- Գնացե՛ք աշխատանքի, կապիկներ: Ի՞նչ եք այստեղ ցցվել: Թող Աստված ինձ պատժի, եթե այդ մարդը նորից չխեղճացրեց ցուլին: Նա չի ցանկանում մեզ հետ պայքարել, բայց ասում է, որ ավելի շուտ համաձայն է, որ իրեն սպանեն, քան թույլ կտա իրեն տեղից շարժել: Անցե՛ք աշխատանքի, կապիկներ:

Իռլանդացիները և շոտլանդացիները տարօրինակ մարդիկ են, բայց նրանց հետ հեշտ է լեզու գտնել, միայն պետք է իմանալ, թե որ ծայրից սկսել: Այդ Քելին հետո իմ ամենանվիրված ընկերներից դարձավ: Փորձը ինձ ցույց է տվել, որ բանվորների վրա կարելի է հույս դնել, նրանք միշտ ճիշտ և արդարացի են վարվում, եթե միայն անվերապահորեն չեն ենթարկվում իրենց առաջնորդին:

Ռուսերենից թարգմանությունը՝ Գևորգ Հակոբյանի